# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի**
**(№ 14)**

11 նոյեմբերի 2016թ.

ժամը՝ 15⁰⁰

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղցք համայնքում մանկապարտեզի կառուցում» ծրագրի մասին:

(Սոս Գևորգյան)

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում» ծրագրի մասին:

(Սոս Գևորգյան)

3. Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Վանաձորի տարեցների տուն հիմնադրամի կաթսայատանը նոր ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագրի մասին:

(Բագրատ Սարգսյան)

4. «Դիակոնիա» բարեգործական հիմադրամի կողմից իրականացվող «Բնակելի տան մասնակի վերանորգում» ծրագրի մասին:

(Վահե Ավագյան)

5. «Դիակոնիա» բարեգործական հիմադրամի կողմից իրականացվող «Սոցիալական աջակցության կենտրոնի մասնակի վերանորոգում» ծրագրի մասին:

(Վահե Ավագյան)

## 6. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին

(Արման Բարխուդարյան)

6.1 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

6.2 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 1**):

6.3 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված ավտոմեքենայի ներմուծման ծրագրի մասին:

6.4 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

6.5 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 1**):



6.6 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 2**):

6.7 Հայաստանի Հանրապետության գիտությունների Ազգային ակադեմիա «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

6.8 Հայաստանի Հանրապետության գիտությունների Ազգային ակադեմիա «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 1**):

6.9 Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

6.10 «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

6.11 «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

6.12 «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին:

6.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):

6.14 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-435-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

6.15 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմադրամ):

6.16 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 12-ի N Մ-110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ):

6.17 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ):

6.18 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատ-

ված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

6.19 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 1** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

## 7. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին

(Արման Բարխուդարյան)

7.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1240-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն):

7.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-075-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամ):

7.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

7.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

7.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի N Մ-215-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

7.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-956-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամ):

7.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):

7.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N Մ-792-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):

7.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1310-Ա որոշմամբ հաս-



տատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Մայրի» հասարակական կազմակերպություն):

7.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-1173-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ):

## 8. Այլ հարցեր

8.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N Մ-1065-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին):

8.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1386-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչություն):

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**նոյեմբերի 2016 թվականի N Մ - - Ա**

**քաղ. Երևան**

14/1

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՂՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» Ծ Ր Ա Գ Ր Ի Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/ -16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 02/14/ -16, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 01/14.1/ -16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի -ի N 06/3-8/ -16 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 01/21.1/ -16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 163,748,799 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղցք համայնքում մանկապարտեզի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքները անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09811047) 2016 թվականի օգոստոսի 8-ին կնքված՝ N ՀՀՏՀ-05/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկապարտեզի կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 1,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. «Բիդեք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00450801) 2016 թվականի օգոստոսի 8-ին կնքված՝ N ՀՀ/Մ-1/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկապարտեզի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 162,148,799 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:



14/1

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«24» հոկտեմբերի 2016թ.

«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնքում մանկապարտեզի կառուցում»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնքի բնակիչների կյանքի պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Արագածոտնի մարզ, Աղձք համայնք, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 163.748.799,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնքի բնակիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ օգոստոսի 08-ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 08-ը |

2

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ. օգոստոսի 08-ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 08-ը մանկապարտեզի կառուցման աշխատանքների իրականացում՝ 162.148.799 դրամ<br><br>տեխնիկական հսկողության իրականացում՝ 1.600.000,00 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Բիդեր» ՍՊԸ-ի կողմից կառուցման աշխատանքների իրականացում՝ 162.148.799,00 դրամ առանց ԱԱՀ-ի<br><br>«Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 1.600.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

14/1

14/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

01.11.16թ № 01.1/80-2/24682-

Ձեր № ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.10.2016թ. N 15/15.1/16387-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնքում մանկապարտեզի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նունե Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/31652-16
01.11.16թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/1

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/32749-16
27.10.16

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 26.10.2016թ. թիվ 15/15.1/16387-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնքում մանկապարտեզի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՍԿ, Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

044/31087-16
27.10.16թ

14/1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

02.11.16թ N 02/14/14043-16

Ձեր N ____________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 26-ի 15/15.1/16387-16 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնքում մանկապարտեզի կառուցում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

035/31877-16
02.11.16թ

---

## ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

14/1

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"01" 11 2016թ.

N 05/18.2/4686-16

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
Ս. Տեր-Սիմոնյանին

*Ի պատասխան Ձեր 26.10.2016թ.*
*թիվ 15/15.1/16387-16 գրության*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

<<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնքում մանկապարտեզի կառուցում>> ծրագրի մասին>> որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

Միաժամանակ, հայտնում ենք, որ ՀՀ Արագածոտնի մարզպետի և Աղձք համայնքի ղեկավարի հետ համատեղ քննարկվել է մանկապարտեզը շահագործման հանձնելուց հետո պահպանման, սպասարկման ծախսերի աղբյուրն ու հնարավորությունը, որի վերաբերյալ կից ներկայացվում է ՀՀ Արագածոտնի մարզպետի գրությունը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

Ա. Խաչատրյան

*Կատարող՝ Նարինե Սարգսյան*
*Տարածքային ներդրումային քաղաքականության վարչություն*
*Հեռ.՝ 010 511 327*

025/31777-16
01.11.16թ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

14/1

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 c. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

__________ N __________

***Ի պատասխան Ձեր 31.10.2016թ.***
***05/18.2/4589-16 գրության***

*Հայաստանի Հանրապետության տարածքային*
*կառավարման և զարգացման*
*նախարարի տեղակալ*
*պարոն Ա.Խաչատրյանին*

*Հարգելի պարոն Խաչատրյան*

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնքում կառուցվող մանկապարտեզը շահագործման հանձնելուց հետո, ըստ Աղձք համայնքի ղեկավարի հավաստիացման՝ մանկապարտեզի պահպանման, սպասարկման ծախսերը կիրականացվեն համայնքապետարանի և համայնքի բարերարների միջոցների հաշվին:

*Հարգանքով՝*

Գ.ԳՅՈԶԱԼՅԱՆ

Կատարող՝ Ա. Դավթյան
Հեռ. 0232 3-37-74

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

14/1

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 c. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

28.10.16թ N 01/14.2/3953-16

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ձեր 26.10.2016թ. թիվ 15/15.1/16387-16 գրությունով ներկայացված ԿԲԾՀՀ ծրագիրն առաջարկում ենք որակել բարեգործական:

*Հարգանքով՝*

Գ.ԳՅՈԶԱԼՅԱՆ

Կատարող՝ Ա. Դավթյան
Հեռ. 0232 3-37-74

110/38326-16
28.10.16թ

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**նոյեմբերի 2016 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

14/2

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «Ն.ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԿ» ՓԲԸ-Ի ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/ -16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 02/14/ -16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 01/14.1/ -16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի -ի N 06/3-8/ -16 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 01/21.1/ -16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,254,100 դրամ ընդհանուր արժողությամբ «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքները անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02205001) 2016 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված՝ N ԱԲՍ-09/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական սարքավորումների ձեռքբերում՝ 460,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02205001) 2016 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված՝ N ԱԲՍ-11/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական պարագաների ձեռքբերում՝ 454,700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



14/2

3) «ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02205001) 2016 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված՝ N ԱԲՍ-12/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական պարագաների ձեռքբերում՝ 339,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«24» հոկտեմբերի 2016թ.

14/2

**« Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում »**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ն վիրահատությունների համար անհրաժեշտ սարքավորումներով և պարագաներով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, Խաչարձան գյուղ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է՝ 1.254.100,00 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի հիվանդներն ու բուժանձնակազմը |

2

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ հոկտեմբերի 05-ից մինչեւ 2016թ. դեկտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն թվականի հոկտեմբերի 05-ից մինչև դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում հետևյալ պարագաների գնում.<br>2 հատ հիվանդի տեղափոխման պատգարակ՝ 390.000,00 դրամ<br>2 հատ բժշկի աթոռ՝ 70.000,00 դրամ<br>կարանցյուր՝ 454.700,00 դրամ և՝ 339.400,00 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ից<br>2 հատ հիվանդի տեղափոխման պատգարակի /390.000,00 դրամ/<br>2 հատ բժշկի աթոռի / 70.000,00 դրամ/<br>կարանցյուրի / 454.700,00 դրամ և 339.400,00 դրամ/<br>ձեռքբերում և անհատույց հանձնում՝ 1.254.100,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցություն չի նախատեսվում |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

14/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

31.10.16թ № 01.1/80-2/24614-1

Ձեր №

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

14/2

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.10.2016թ. N 15/15.1/16380-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/31433-16
31.10.16թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-3/32738-16
27.10.16թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 26.10.2016թ. թիվ 15/15.1/16380-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Ն. Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՍԿ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

044/31092-16
27.10.16թ

14/2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

31.10.16թ N 02/14/13908-16

Ձեր N ____________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 26-ի 15/15.1/16380-16 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Անդրանիկ Ռաշիդյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 29

035/31481-16
31.10.16թ

---

14/2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

28.10.16թ N ՔՆ/22.2/11799-16

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2016 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 15/15.1/16380-16 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
/ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՐԱՅԻԿ ԲԱՂՐՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախչյան
դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

020/31288-16
28.10.16թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶՊԵՏ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

14/2

4001, ՀՀ ք. Իջեւան Սահմանադրության 1, РА, г. Иджеван Сагманадрутян 1, RA, Ijevan Sahmanadrutyan 1
հեռ.тел.phon. /0263/ 4-00-45, 4-23-56 Ֆաքս /факс , fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB http://tavush.mtad.am

01/21/4262-16
01.11.16թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.10.2016թ. թիվ 15/15.1/16380-16 գրության հայտնում եմ, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում» ծրագրի մասին» որոշման նախագիծը քննարկվել է ՀՀ Տավուշի մարզպետարանում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և արժանացել հավանության:

Նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

Հարգանքով՝

Հ. ԱԲՈՎՅԱՆ

Կատ. Գ. Հարությունյան
Հեռ. 0263 4 45 61

119/31776-16
01.11.16թ

---

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**նոյեմբերի 2016 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

14/3

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱԹՍԱՅԱՏԱՆԸ ՆՈՐ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 01.1/80-2/-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 04/ -16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նոյեմբերի -ի N 06/3-4/ -16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 3,078,467 դրամ արժողությամբ «Վանաձորի տարեցների տուն հիմնադրամի կաթսայատանը նոր ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01547716) 2016 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կաթսայատան մասնակի վերանորգման, ջեռուցման համակարգի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 3,078,467 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից
«25» հոկտեմբերի 2016թ

# Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից «Վանաձորի տարեցների տուն հիմնադրամի կաթսայատանը ջեռուցման նոր համակարգի տեղադրում»

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Վանաձորի տարեցների տան կաթսայատանը տեղադրել ջեռուցման նոր համակարգ, որի արդյունքում հնարավոր կդառնա բարելավել տարեցների տանը մշտապես բնակվող 55 ծերերի կենսապայմանները: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ «Վանաձորի տարեցների տուն հիմնադրամե Հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մայմեխի 8<br>Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է է 3,078,467 (երեք միլիոն յոթանասունութ հազար չորս հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Տարեցների տանը բնակվող 55 ծերեր |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 հոկտեմբերի 2016թ - 20 դեկտեմբերի 2016թ |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նախատեսվում է Վանաձորի տարեցների տան կաթսայատանը տեղադրել ջեռուցման նոր համակարգ, որի արդյունքում հնարավոր կդառնա բարելավել տարեցների տանը մշտապես բնակվող 55 ծերերի կենսապայմանները: |

14/3

2

| | | |
|---|---|---|
| | | Ծրագրի տևողությունը՝ 2016թ հոկտեմբերի 20-ից մինչև 2016թ դեկտեմբերի 20-ը:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 3,078,467 (երեք միլիոն յոթանասունութ հազար չորս հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ:<br>Իրականացվելիք աշխատանքների մանրամասն ցանկը ներկայացված է պայմանագրին կից հավելվածում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք ԱԱՀ ազատում 3,078,467 ՀՀ դրամի չափով համաձայն ծառայությունների պայմանագրի առ 20.10.2016թ, կնքված «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Ձրաշատի փ., թիվ 1, ՀՎՀՀ 01547716) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝<br>1. ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի,<br>2. Տեղական ինքնակառավարման մարմինների հետ<br>3. Վանաձորի տարեցների տուն հիմնադրամի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի և Երևանի գրասենյակների կողմից, եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

14/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

14/3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

28.10.16թ. № 01.1/80-2/24550-16

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.10.2016թ. N 15/15.1/16314-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Վանաձորի տարեցների տուն հիմնադրամի կաթսայատանը նոր ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/31329-16
28.10.16թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/3

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/32579-16
28.10.16թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 26.10.2016թ. թիվ 15/15.1/16314-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Վանաձորի տարեցների տուն հիմնադրամի կաթսայատանը նոր ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎՍՀԿ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

044/30946-16
28.10.16թ

14/3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

02.11.16թ N 02/14/[illegible]-16

Ձեր N ____________________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 26-ի 15/15.1/16314-16 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Վանաձորի տարեցների տուն հիմնադրամի կաթսայատանը նոր ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

035/31878-16
02.11.16թ

---

*ՆԱԽԱԳԻԾ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

___ նոյեմբերի 2016 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

14/4

### «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/3-8/-16 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 02/14/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 3,900,000 դրամ ընդհանուր արժեքով «Բնակելի տան մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2016 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N 010916 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բնակելի տան մասնակի վերանորոգման և տանիքի կառուցման աշխատանքների իրականացում՝ 3,900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբազյանի կողմից

«21»-ը հոկտեմբերի 2016թ.

**«Բնակելի տան մասնակի վերանորոգում»**
**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մարտակերտ քաղաքի Արովյան 6 հասցեում գտնվող բնակելի տան մասնակի վերանորոգման և տանիքի կառուցման աշխատանքներ |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | **Բարեգործը** | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (հասցե՝ Շվեյցարիա, Բեյնվիլ ամ Զեե CH 5712, Ֆելդշտրասսե 9) |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Մարտակերտի շրջան՝ սոցիալական բնագավառ |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 3,900,000 դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | Սոցիալապես անապահով ընտանիք՝ Գյուրջյան Սանասար (անձնագիր՝ AP0212035, տրվ. 23.04.2014թ. 070 կողմից, հեռախոս՝ 097.22.36.76) |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 2016 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը |

14/4

| | | |
|---|---|---|
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | 2016 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2016թ. թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Մարտակերտ քաղաքում բնակելի տան մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ 3,900,000 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է Մարտակերտ քաղաքում բնակելի տան մասնակի վերանորոգման և տանիքի կառուցման պայմանագիր, որի արժեքը կազմում է 3,900,000 դրամ: |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի քաղաքապետարան |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Հաշվետվությունների ներկայացում Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով: |

Կազմեց՝ <u>տնօրենի տեղակալ Վահե Ավագյան</u>
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

14/4

14/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

01.11.16թ. № 01.1/80-2/24727-16

Ձեր № ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 28.10.2016թ. N 15/15.6/16615-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բնակելի տան մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

01.11.16թ.

№ 034/31826-16

14/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

02.11.16թ. N 02/14/14041-16

Ձեր N ____________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի 15/15.6/16615-16 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բնակելի տան մասնակի վերանորոգում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

02.11.16թ.

№ 035/31857-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/4

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

31. 10. 16թ.
№ 06/3-8/33071-16

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 28.10.2016թ. թիվ 15/15.6/16615-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բնակելի տան մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎՍՀԿ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

31. 10. 16թ.
№ 044/31466-16

<u>*ՆԱԽԱԳԻԾ*</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ նոյեմբերի 2016 թվականի N Մ -          -Ա**   14/5
**քաղ. Երևան**

**«ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/3-8/-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 02/14/-16, Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N ՖԲ/ԱնՄ-2-1/-16 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2016 թվականի հոկտեմբերի -ի N -16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 963,218 դրամ ընդհանուր արժեքով «Սոցիալական աջակցության կենտրոնի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2016 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված՝ N 280916 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Սոցիալական աջակցության կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 963,218 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբաքյանի կողմից

«6»-ը հոկտեմբերի 2016թ.

ՀԻՄՆԱԴՐԱՄ ФОНД FUND 00068196 DIAKONIA

«Սոցիալական աջակցության կենտրոնի մասնակի վերանորոգում»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի 3-րդ թաղամաս, 15-րդ փողոց, 9/1 և 9/2 հասցեում գտնվող «Սոցիալական աջակցության կենտրոնի»-ի շենքում ճաղաշարերի պատրաստման ու տեղադրման, անցուղու կառուցման և խոհանոցում արտածման օդամուղի տեղադրման աշխատանքներ |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հոլանդիայի «Մենսենկինդերեն» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ Նիդերլանդներ, քաղ. Հարդերվայք 3842 DR, Օուստայնդե 23) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք՝ սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 963,218 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Լոռու մարզ, Թումանյան համայնք, «Սոցիալական աջակցության կենտրոն» |

14/5

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև 2016թ. թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում «Սոցիալական աջակցության կենտրոնի» շենքում վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 963,218 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Սոցիալական աջակցության կենտրոնի» շենքում վերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագիր, որի արժեքը կազմում է 963,218 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի մարզպետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվությունների ներկայացում «Մենսենկինդերեն» բարեգործական հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով: |

Կազմեց՝ տնօրենի տեղակալ Վահե Ավագյան
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

14/5

14/5

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

01. 11. 16թ. № 01.1/80-2/24676-16

Ձեր № ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.10.2016թ. N 15/15.6/16394-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական աջակցության կենտրոնի մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

01. 11. 16թ.
№ 034/31658-16

14/5

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

02. 11. 16թ. N 02/14/14042-16

Ձեր N ____________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի 15/15.6/16394-16 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական աջակցության կենտրոնի մասնակի վերանորոգում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

02. 11. 16թ.
№ 035/31875-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

14/5

«31» հոկտեմբեր 2016 թ. N ՖԿ/ՄՀԾ-2-1/10120-16

Ձեր 2016-10-27, 15/15.6/16394-16

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով ««Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական աջակցության կենտրոնի մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
http://www.mlsa.am info@mlsa.am

31. 10. 16թ.
№ 040/31409-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/5

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

27. 10. 16թ.
№ 06/3-8/32860-16

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 27.10.2016թ. թիվ 15/15.6/16394-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական աջակցության կենտրոնի մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝ **Վ. Միրումյան**

ՀՎՍՀԿ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

27. 10. 16թ.
№ 044/31175-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

14/5

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-28-77

թիվ 101/104.3.2/5067-16
« 31 » հոկտեմբեր 2016 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 27.10.2016 թ. 15/15.6/16394-16 համարի գրությանը

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Կարևորում եմ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 963,218 դրամ ընդհանուր արժեքով Լոռու մարզի Թումանյան համայնքի «Սոցիալական աջակցության կենտրոնի մասնակի վերանորոգում» ծրագիրը և չեմ առարկում այն որակել որպես բարեգործական:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

31.10.16 թ
№ 114/31434-16

կատ. Ս.Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

***ՆԱԽԱԳԻԾ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ նոյեմբերի 2016 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

14/6.1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/3-8/-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N ԱՄ/22.2/-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի (7 տեղ, 553 կգ ընդհանուր քաշով, 807,565.24 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,540 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

14/6.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

28.10.16թ. № 01.1/80-2/24503-

Ձեր № ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.10.2016թ. N 15/15.6/16342-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

28.10.16թ
№ 034/31225-16

14/6.1

«ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

ՀԱՀ 052

| Հ/Հ | Դոնոր | Նկարագրություն | Ստացող | Կոդ | Արկղ | Քաշ (lbs) | Արժեք (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | ՀՀ առողջապահության նախարարություն | Air 052-01 | 305 | 911 | 503,568.63 |
| 2. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ավետիսյան Կ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | NKR Air 052-02 | 30 | 153 | 140,223.43 |
| 3. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ղազարյան Ս.- «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ | Air 052-03 | 3 | 40 | 126,759.60 |
| 4. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Մինասյան Ա.- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն | Air 052-04 | 10 | 49 | 37,013.58 |
| **Ընդամենը՝** | | | | | 348 | 1153 | **807,565.24** |
| **Փոխադրման ծախսեր՝** | | | | | | | **2,540.00** |
| **Ընդամենը՝** | | | | | | | **810,105.24** |

14/6.1


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am


28.10.16թ. N ՎՀ/22.2/11801-16
Ձեր N ________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2016 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 15/15.6/16342-16 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
/ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՐԱՅԻԿ ԲԱՂՐՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախյան
դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

28.10.16թ.
№ 020/31304-16

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.1


0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303


27.10.16թ.
№ 06/3-8/32705-16

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.10.2016թ. թիվ 15/15.6/16342-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՄՀԿ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

27.10.16թ.
№ 044/31045-16

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

___ նոյեմբերի 2016 թվականի N Մ - -Ա 14/6.2
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N ՎՀ/22.1/11636-16 միջնորդագիրը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Axios» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ օնկոլոգիական հիվանդություններով տառապող հիվանդներին դեղորայքի տրամադրման միջազգային ծրագրի շրջանակներում ստացված 700 տուփ «Գլիվեկ HGC 100 մգ N 120» դեղի (մեկ տեղ (10 արկղ), 88 կգ ընդհանուր քաշով, 2,660,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց հատկացման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

14/6.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

28.10.16թ. №01.1/80-2/24506

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.10.2016թ. N 15/15.6/16393-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

28.10.16թ.
№ 034/31245-16

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/6.2

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

31.10.16թ.
№ 06/3-8/33177-16

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 27.10.2016թ. թիվ 15/15.6/16393-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» (N1) միության հայաստանյան մասնաճյուղ) որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎՀՀ, Ն. Բեժանյան
հեռ. 060 544705

31.10.16թ
№ 044/31551-16

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

14/6.2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

26.10.16թ. N ՎՀ/22.1/11636-16
Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «AXIOS» հասարակական կազմակերպության կողմից «Նովարտիս ֆարմա»-ի միջոցով խրոնիկ միելոլեյկոզ հիվանդությամբ տառապող հիվանդներին աջակցելու նպատակով թիվ 2001173901 առ 18.10.2016թ. հաշիվ/ապրանքագրով Հայաստան է ներմուծվելու 1 տեղ (700 տուփ), 88 կգ քաշով, 2 660 000 ԱՄՆ դոլար արժողությամբ (ներառյալ տրանսպորտային ծախսեր) Գլիվեկ HGC 100մգ N120 TRI 10X12 U17F_1դեղը:

ՀՀ ԱՆ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ը իրականացնելու է ստացվող բեռի մաքսազերծումը, տեղափոխումը, պահեստավորումը, պահպանումը և անհատույց հատկացումը «Ռ. Հ. Յոլյանի անվ. արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ին: Վերջինս էլ դեղերը անհատույց հատկացնելու է խրոնիկ միելոլեյկոզ հիվանդությամբ տառապող հիվանդներին:

Բեռը մաքսազերծվելու է ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ-ում: Խնդրում եմ նախքան բեռի ժամանումը նշված բեռի ներմուծումը որակել բարեգործություն:

Կից ներկայացնում եմ «Նովարտիս ֆարմա»-ի կողմից ուղարկված բեռի փաստաթղթերը:

Առդիր՝ 10 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
/ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՐԱՅԻԿ ԲԱՂՐՅԱՆ

Կատարող՝ դեղորայքային քաղաքականության բաժին
Անահիտ Մկրտչյան Հեռ՝ 52 27 21

26.10.16թ.
№ 020/30855-16

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**նոյեմբերի 2016 թվականի N Մ - - Ա**

**քաղ. Երևան**

14/6.3

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/ -16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նոյեմբերի -ի N 06/3-8/ -16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ*** *է.*

1. Բարեգործական որակել ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված հաշմանդամի համար նախատեսված ավտոմեքենայի (2004 թվականի արտադրության CHEVROLET VENTURE մակնիշի, նույնականացման համարը՝ 1GNDX03E84D188325, 1,885 կգ քաշով, 750 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,000 ԱՄՆ-ի դոլար, ԱՄ ՄԶՄ ՄՏ) ներմուծման և Արցախի ազատամարտի հաշմանդամ վետերանին անհատույց հանձման ծրագիրը:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ավտոմեքենայի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

14/6.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

01.11.16թ № 01.1/80-2/24682

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի՝ պատասխան Ձեր 27.10.2016թ. N 15/15.1/16405-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված ավտոմեքենայի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այկվազյան
Հեռ. 011 910-435

034/31652-16
01.11.16թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.3

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/32921-16
28.10.16թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահի
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 27.10.2016թ. թիվ 15/15.1/16405-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված ավտոմեքենայի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՀՀ. Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

044/31291-16
28.10.16թ.

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**նոյեմբերի 2016 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

14/6.4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայասփանի Հանրապեփության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայասփանի Հանրապեփության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 01.1/80-2/ -16 և Հայասփանի Հանրապեփության կառավարությանն առընթեր պեփական եկամուփների կոմիփեի նոյեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Հայկ Վլադիմիրի Բալայանի (անձնագիր՝ N 4615831330, տրված՝ 07.05.2015 թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի (12 տեղ, 92 կգ ընդհանուր քաշով, 182,802 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 4,025 ռուսական ռուբլի, բեռի ցանկը կցվում է, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռները ստանալուց հետո հանձնվելու են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

## ՑԱՆԿ

ՌԴ-ից անհատ բարերար Հայկ Բալայանի կողմից 14549931 և 14561595 ավիաբեռնագրերով ուղարկված բեռների

14/6.4

| N | Անվանում | Քանակ | Արժեք |
|---|---|---|---|
| 1 | Քնապարկ Forclaz 10L | 20 հատ (1հատը` 15999 ռուբլի) | 31980 ռուբլի |
| 2 | Ռադիոկառավարվող ինքնաթիռ Multiplex Funjet ultra KIT (լրակազմ` առանց շարժիչի և մարտկոցների) | 10հատ (1 հատը` 8100 ռուբլի) | 81000 ռուբլի |
| 3 | Մարտկոց Fullymax LiPo 22.2v 6s 20c 2700 | 3 հատ (1 հատը` 3610ռուբլի) | 10830 ռուբլի |
| 4 | Վրան Bluebird կանաչ, TTT-001.09 | 7 հատ (1 հատը` 1980 ռուբլի) | 13860 ռուբլի |
| 5 | Վրան Royal House Camping | 1 հատ (1 հատը` 7154 ռուբլի) | 7154 ռուբլի |
| 6 | Վրան Сплав "Skif3" | 3 հատ (1 հատը` 4320 ռուբլի) | 12960 ռուբլի |
| 7 | Ուսապարկ Сплав "PK1" | 5 հատ (1 հատը` 2725.20 ռուբլի) | 13626 ռուբլի |
| 8 | Կանանց կիսաճտքավոր կոշիկներ Crosser2 | 8 զույգ (1 զույգը` 1299 ռուբլի) | 10392 ռուբլի |
| 9 | Ամսագիր "Карабахский курьер | 20 հատ (1 հատը`50 ռուբլի) | 1000 ռուբլի |

Ընդհանուր արժեքը` 182 802 ռուբլի

ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ · PERMANENT REPRESENTATION OF NKR IN REPUBLIC OF ARMENIA
ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ Կ. Պողոսյան` 01538293

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

14/6.4

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

28.10.16թ № 01.1/80-2/24519-16

Ձեր №

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.10.2016թ. N 15/15.1/16357-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ առաջարկում ենք որոշման նախագծի 1-ին կետում նշված «...ստացված...» բառից հետո ավելացնել «...բեռի...» բառը:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

034/31247-16
28.10.16թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.4

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/32747-16
27.10.16թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 26.10.2016թ. թիվ 15/15.1/16357-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՀՀ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

044/310904
27.10.16թ

---

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**նոյեմբերի 2016 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան**

14/6.5

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ(N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 01.1/80-2/ -16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նոյեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Հայ օգնության ֆոնդի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի (2 տեղ, 291 կգ ընդհանուր քաշով, 481 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 316.47 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռները ստանալուց հետո հանձնվելու են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

14/6.5

# ՑԱՆԿ

**ԱՄՆ-ի «Հայ օգնության ֆոնդ»-ի կողմից S00002197 առ 14.09.16թ. հաշիվ ապրանքագրով (ինվոյս) ուղարկված բեռի (բժշկական պարագաների)**

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Տեղերի թիվը | Քանակը | Քաշը կգ /բրուտտո/ | Քաշը կգ /նետտո/ | Արժեքը /դոլար/ | Ծագման երկիրը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բժշկական պարագաների կոմպլեկտ | 1 | 21 տուփ | 81 | 60 | 84 | ԱՄՆ |
| 2 | Վիրահատական դրենաժային սարք | | 18 տուփ | 40 | 38 | 90 | ԱՄՆ |
| 3 | Վիրահատական թել | | 250 տուփ | 68 | 64 | 150 | ԱՄՆ |
| 4 | Մտերիլ վիրակապեր | 1 | 350 տուփ | 48 | 44 | 90 | ԱՄՆ |
| 5 | Միանվագ խողովակներ /լրակազմ/ | | 250 հատ | 54 | 50 | 67 | ԱՄՆ |
| Ընդամենը | | 2 | | 291 | 256 | 481 | |

Վարչատնտեսական բաժնի պետ՝

Պողոսյան [illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ 14/6.


0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312


01.11.16թ. № 01.1/80-2/24724-

Ձեր №

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 28.10.2016թ. N 15/15.1/16612-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

034/31328-1
01.11.16

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/6.5


0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303


06/3-8/33220-16
01.11.16թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 28.10.2016թ. թիվ 15/15.1/16612-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» **N 1** որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**


ՀՎՍՀԿ, Ն.Բեժանյան
հեռ. 060 544705


044/31660-16
01.11.16թ

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**նոյեմբերի 2016 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

14/6.6

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/ -16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նոյեմբերի -ի N 06/3-8/22830-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վարդան Կիրոպի Կիրոյանցի (անձնագիր՝ N 03 05 546287, տրված՝ 07.09.2004 թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուց-չության հասցեով ստացված բեռի (63 տեղ, 21,405 կգ ընդհանուր քաշով, 935,901.76 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ԵՏՄ-ի բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-թյուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

14/6.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

04.11.16թ № 01.1/80-2/24564-16

Ձեր №

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 01.11.2016թ. N 15/15.1/16887-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 2)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

034/32333-16

04.11.16թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.6

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/33779-16

04.11.16թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 01.11.2016թ. թիվ 15/15.1/16887-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **(N 2)**» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎԱՀԿ, Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

044/32200-16

04.11.16թ

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**նոյեմբերի 2016 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

14/6.7

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 01.1/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի -ի N 06/3-4/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի հայկական թանգարանի կողմից, Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված Հայաստանի Հանրապետության զինանշանով ափսեի և պաստառի (2 տեղ, 3,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 131.35 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

14/6.7

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

23.10.16թ № 01.1/80-2/24301-16

Ձեր № ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.10.2016թ. N 15/15.9/16337-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

034/31241-16
23.10.16

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/6.7

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/32922-16
28.10.16թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 26.10.2016թ. թիվ 15/15.9/16337-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎՀՀ, Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

044/31301-16
28.10.16թ

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

14/6.8

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**նոյեմբերի 2016 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 01.1/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի -ի N 06/3-4/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Դանիայի թագավորության՝ Հայաստանի Հանրապետության դեսպանության կողմից, Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված մետաքսի վրա հայկական զինանշանի (մեկ տեղ, 125 կգ ընդհանուր քաշով, 7,255 դանիական կրոնին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 3,981.25 դանիական կրոն, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

14/6.B

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

28.10.16թ № 01.1/30-2/24302-1

Ձեր №

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.10.2016թ. N 15/15.9/16358-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

034/31224-16
28.10.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.B

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-3/32746-16
27.10.16թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.10.2016թ. թիվ 15/15.9/16358-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N1)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՀՀ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

044/31089-16
27.10.16

*Ն Ա Խ Ա Գ Ի Ծ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**նոյեմբերի 2016 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

14/6.9

## ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 01.1/80-2/-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 01.1/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական. եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Հայ օգնության ֆոնդի կողմից Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռի (400կգ ընդհանուր քաշով, 21,361.60 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, որից 411.60 ԱՄՆ-ի դոլար կազմում են փոխադրման ծախսերը, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բեռը բաշխելու մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

14/6-9

Հաստատում եմ՝ Բ. Սարգսյան

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ

Ներմուծվող ապրանքների և ստացող կազմակերպությունների ցանկը

Կոնտեյներ S00002195

01/11/2016

Ստացող՝ Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ
Խորենացի 22
Երևան, 0010 Հայաստան
Հեռ.՝ 060-52-66-60
Պատասխանատու՝ Բագրատ Սարգսյան

| Ապրանքի նկարագիրը | Ստացողների լրիվ անվանումը, իրավաբանական հասցեն | Բեռների հասկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ՔԱՆԱԿ | ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐ | ՔԱՇ ԲՐՈՒՏՏՈ ԿԳ | ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ | ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շապիկ | Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու Տավուշի թեմ , ք. Իջևան Երևանյան փ | Տավուշի մարզի անապահով ընտանիքներին | Բեռը կտրամադրվի մարզում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքներին, ովքեր ունեն 3 և ավելի երեխաներ | 10 | հատ | 400.00 | $ 20,950.00 | $ 411.60 |
| Փողկապ | | | | 2 | հատ | | | |
| Տաբատ | | | | 75 | հատ | | | |
| Վերնաշապիկ | | | | 17 | հատ | | | |
| Ձմեռային վերարկու | | | | 200 | հատ | | | |
| Կաշվե կոշիկ | | | | 30 | զույգ | | | |

Ընդամենը՝ 2 սկիհ (քանակ)

21 361.60 ԱՄՆ դոլար (արժեք)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

14/6.9

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

04.11.16թ. № 01.1/80-2/24967-16

Ձեր № ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 01.11.2016թ. N 15/15.1/16888-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

034/32335-16

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/6.9

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/33910-16
07.11.16թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 01.11.2016թ. թիվ 15/15. 1/16888-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎՍՀԿ. Ն. Բեժանյան
հեռ. 060 544705

047/32405-16
07.11.16թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.9

« 03 » 11 2016 թ. N ՀԻ/ՀՀՄ-2-1/10293

Ձեր 2016-11-01, 15/15.1/16888-16

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով «Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

040/32148-16
03/11.16

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ նոյեմբերի 2016 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

14/6.10

«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի -ի N 06/3-4/-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N -16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N -16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Օգնության և զարգացման հայկական ընկերակցության (ARDA) կողմից «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի (օգտագործված ակնաբուժական սարք՝ մեկ տեղ, 13 կգ ընդհանուր քաշով, 985 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 75,000 դրամ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

Ներմուծվող ակնաբուժական սարքը անհատույց հանձնվելու է «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամին՝ Գյումրի քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին, մանկատան սաներին և միայնակ ծերերին անվճար բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

2. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց ու անհատույց հանձնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

14/6.10

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

07.11.2016թ. №01.1/80-2/25048-16

Ձեր № ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 03.11.2016թ. N 15/15.6/17140-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հաշվեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծի 3-րդ կետում ներառել նաև ՀՀ Շիրակի մարզպետարանին:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

034/32519-16
07.11.2016թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

14/6.10

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

07.11.2016թ. N ԱԿ/22.2/12198-16
Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 15/15.6/17140-16 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հաշվեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՐԱՅԻԿ ԲԱՂՐՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախչյան
դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

020/32526-16
07.11.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.10

« 07 » 11 2016 թ. N 8Ֆ/ԱՀԽ-2-1/10423-16

Ձեր 2016-11-03, 15/15.6/17140-16

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով ««ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
http://www.mlsa.am info@mlsa.am

040/32439-16
07.11.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.10

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

N: 06/3-8/33905-16
07.11.2016թ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 03.11.2016թ. թիվ 15/15.6/17140-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝ Վ. Միրումյան

ՀՎՀՀ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

044/32412-16
07.11.2016թ.

***ՆԱԽԱԳԻԾ***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**հոկտեմբերի 2016 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

14/6.11

## «ԿԻՍԱԲԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 01.1/80-2/-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N ՖԲ/ԱնՄ-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Ընտանիքի փրկության» հիմնադրամի կողմից «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի (3 տեղ, 40.62 կգ ընդհանուր քաշով, 150 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը կցվում է, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը բաշխվելու է «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի մասնակից սոցիալապես անապահով ընտանիքներին:

2. «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

14/6.10

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծի 3-րդ կետում ներառել նաև ՀՀ Շիրակի մարզպետարանին | Հաշվի է առնվել: |

## Բեռի լրամշակված ցանկ

14/6.11

| Անվանում | Քաշ | Արժեք |
|---|---|---|
| Հագուստ (նոր) | 33.62 կգ | 120 ԱՄՆ դոլար |
| Խաղալիքներ (նոր) | 7 կգ | 30 ԱՄՆ դոլար |
| | Ընդհանուր 40.62 կգ | Ընդհանուր 150 ԱՄՆդոլար |

«Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի
Տնօրեն Հրայր Մուրադյան Կ.Տ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

14/6.11

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

28.10.16թ № 01/01.1/20-2/2449

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 25.10.2016թ. N 15/15.9/16262-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

034/31217-1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.11

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/32741-16
27.10.16թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 25.10.2016թ. թիվ 15/15.9/16262-16 գրությանը կից ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝ Վ. Միրումյան

ՀՎՍՀ, Ն. Բեժանյան
հեռ. 060 544705

044/31086-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.11

« 26 » 10 2016 թ. N [illegible]

Ձեր 2016-10-25, 15/15.9/16262-16

ՏՐ/ՀՀՆ Մ-2-1/8973-1

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով ««Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

040/30899-16
26.10.16թ

***ՆԱԽԱԳԻԾ***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**հոկտեմբերի 2016 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

14/6.12

## «ԿԻՍԱԲԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 01.1/80-2/-16 ,Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N ՖԲ/ԱնՄ-2-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմադրամի հասցեով ուղարկված բեռների ներմուծման և բաշխման ծրագիրը՝

1) ԱՄՆ-ից անհատ բարերար Նաիրա Նալբանդյանի կողմից ուղարկված նոր հագուստը՝ 2 տեղ, 61.1 կգ ընդհանուր քաշով, 200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը,

2) ԱՄՆ-ից անհատ բարերար Լիդա Ռոստոմյանի կողմից ուղարկված նոր հագուստը՝ 1 տեղ, 26.360 կգ ընդհանուր քաշով, 250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը:

Մաքսային ձևակերպումները կատարվելու են «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատանը: Բեռը բաշխվելու է «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի մասնակից սոցիալապես անապահով ընտանիքներին:

2. «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Ա Ռ Ա Ջ Ի Ն   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

14/6.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

28.10.16թ. № 01.1/80-2/24509-16

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 25.10.2016թ. N 15/15.9/16260-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

034/31243-16
28.10.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.12

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/32740-16
27.10.16թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 25.10.2016թ. թիվ 15/15.9/16260-16 գրությանը կից ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

*Հարգանքով՝*

Վ. Միրումյան

ՀՎՍՀ, Ն. Բեժանյան
հեռ. 060 544705

044/31084-16
27.10.16

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.12

«27» 10 2016 թ. N ԱՖ/[illegible]

Ձեր 2016-10-25, 15/15.9/16260-16

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով ««Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

040/31153-16
27.10.1[illegible]

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**հոկտեմբերի 2016 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

14/6.13

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-002-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/ -16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N ՖԲ/ԱնՄ-2-1/ -16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի -ի N 06/3-8/ -16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռները (54 տեղ, 6,245.96 կգ ընդհանուր քաշով, 52,589 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 2,589 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի

14/6.13

**ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)**

Կոնտեյներների համարներն են՝ FCIU 835052-0: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 52589.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 2589.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 6245.96 կգ, տեղերի քանակը 54:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1900<br>150 | | Ձեռնոց<br>Գրենական կոմպլեկտ | | **3669.41**<br>**725.38** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 2000<br>160 | | Ձեռնոց<br>Գրենական կոմպլեկտ | | **3862.54**<br>**773.74** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Իջևանի տարածաշրջան) |
| 1900<br>140 | | Ձեռնոց<br>Գրենական կոմպլեկտ | | **3669.41**<br>**677.02** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 1900<br>140 | | Ձեռնոց<br>Գրենական կոմպլեկտ | | **3669.41**<br>**677.02** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 1900<br>140 | | Ձեռնոց<br>Գրենական կոմպլեկտ | | **3669.41**<br>**677.02** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 1900<br>140 | | Ձեռնոց<br>Գրենական կոմպլեկտ | | **3669.41**<br>**677.02** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |

02528755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

14/6.13

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1900<br>150 | | Ձեռնոց<br>Գրենական կոմպլեկտ | | 3669.41<br>725.38 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 1900<br>140 | | Ձեռնոց<br>Գրենական կոմպլեկտ | | 3669.41<br>677.02 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 1900<br>140 | | Ձեռնոց<br>Գրենական կոմպլեկտ | | 3669.41<br>677.02 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 1000<br>70 | | Ձեռնոց<br>Գրենական կոմպլեկտ | | 1931.27<br>338.51 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 1300<br>90 | | Ձեռնոց<br>Գրենական կոմպլեկտ | | 2510.65<br>435.23 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 1000<br>70 | | Ձեռնոց<br>Գրենական կոմպլեկտ | | 1931.27<br>338.51 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 2173<br>290 | | Ձեռնոց<br>Գրենական կոմպլեկտ | | 4196.65<br>1402.47 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 6245.96 | 52589.00 | |

02528755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

14/6.13

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

04.11.16թ. № 01/80-2/24914

Ձեր №

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 01.11.2016թ. N 15/15.1/16896-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

034/32221-,
04.11.16,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.13

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/33783-16
04.11.2016թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 01.11.2016թ. թիվ 15/15.1/16896-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝ Վ. Միրումյան

ՀՎՍՀԿ, Ն. Բեժանյան
հեռ. 060 544705

044/32230-16
04.11.16թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.13

« 03 » 11 2016 թ.

N ՖԲ/ԱՍՀՆ-2-1/10299

Ձեր 2016-11-01, 15/15.1/16896-16

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
http://www.mlsa.am info@mlsa.am

040/32150-16
03.11.16թ

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ նոյեմբերի 2016 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

14/6.14

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N Մ-435-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված կվարցային ավազը (5 տոն, 125,000 կգ ընդհանուր քաշով, 6,875 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Խաղադաշտի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-435-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

14/6.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

01.11.16թ. № 01.1/80-2/24726-

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 31.10.2016թ. N 15/15.6/16619-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-435-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

01.11.16թ
№ 034/31827

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.14

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

03. 11. 16թ.
№ 06/3-8/33590-16

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 31.10.2016թ. թիվ 15/15.6/16619-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-435-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎՀՀ, Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

03. 11. 16թ.
№ 044/32060-16

<u>*ՆԱԽԱԳԻԾ*</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**___ նոյեմբերի 2016 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

14/6.15

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/3-8/-16 ու Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N ՖԲ/ԱնՄ-2-1/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մակարոնային արտադրանքը (2,000 տեղ, 20,600 կգ ընդհանուր քաշով, 43,100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ- ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,700 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (բաշխման ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ինվոյս P-D16101101 10.10.2016

*Բեռի բաշխման ցանկ*

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մակարոնային արտադրանք | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 341 | 736 |
| | | | Այգուտ | 164 | 757 | 1.630 |
| | | | Մարտունի | 73 | 337 | 726 |
| | | | Ղարաբակ | 81 | 374 | 805 |
| | | | Վահան | 188 | 867 | 1.869 |
| | | | Կալավան | 23 | 106 | 229 |
| | | | Բարեպատ | 6 | 28 | 60 |
| | | | Զորավանք | 31 | 143 | 308 |
| | | | Անտառամեջ | 22 | 101 | 219 |
| | | | Գավառ | 61 | 281 | 606 |
| | | | Թթուջուր | 81 | 374 | 805 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 235 | 507 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 78 | 169 |
| | | | Արտաշատ | 16 | 74 | 159 |
| | | | Գետազատ | 39 | 180 | 388 |
| | | | Մրգանուշ | 16 | 74 | 159 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 60 | 129 |
| | | | Սևաբերդ | 41 | 189 | 408 |
| | | | Զորաղբյուր | 18 | 83 | 179 |
| | | | Արզական | 38 | 175 | 378 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 221 | 477 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 69 | 149 |
| | | | Իջևան | 18 | 83 | 179 |
| | | Երևան | 3201 | | 14770 | 31.824 |
| | Ընդամենը | | 4335 | | 20000 | 43.100 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն* *Բ. Ջամբազյան*

14/6.15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

14/6.15

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

01.11.16թ. №01.1/80-2/24678-

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.10.2016թ. N 15/15.6/16390 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

01.11.16թ.
№ 034/31656-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.15

« 31 » հոկտեմբեր 2016 թ. N ՖԿ/ԱՏԺՄ-2-1/10137-16

Ձեր 2016-10-26, 15/15.6/16390-16

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

31.10.16թ.
№ 040/31423-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.15

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

27.10.16թ.
№ 06/3-8/32739-16

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 26.10.2016թ. թիվ 15/15.6/16390-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝ Վ. Միրումյան

ՀՎՍՀՎ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

27.10.16թ.
№ 044/31088-16

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

___ հոկտեմբերի 2016 թվականի N Մ - -Ա 14/6.16

քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-110-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ )

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Բաց հասարակության ինստիտուտ» օժանդակության հիմնադրամի կողմից ձեռք բերված ու «Բաց հասարակության ինստիտուտ» օժանդակության հիմնադրա-մի հայկական մասնաճյուղի հասցեով ուղարկված ապրանքները (31 հատ համակարգիչ, 31 հատ մալուխ և 31 հատ ստեղնաշարի կպչուն տառանշաններ, 77.11 կգ ընդհանուր քաշով, 7,709.70 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 7,155.92 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 12-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-110-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1326-Ա և 2016 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1037-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտե:

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

14/6.16

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

24.10.16թ. № 01.1/80-2/2424.

Ձեր № ___________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 20.10.2016թ. N 15/15.11/15820-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 12-ի N Մ-110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)» որոշման նախագծի հետ առաջարկում ենք որոշման նախագծի 1-ին կետում նշված ներմուծվող բեռի ընդհանուր արժեքը (7,155.92 ԱՄՆ դոլար) համապատասխանեցնել կից ներկայացված փաստաթղթերում ամրագրված բեռի փաստացի ընդհանուր արժեքին (14,865.62 ԱՄՆ դոլար):

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

24.10.16թ
№ 034/30538-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.16

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

21.10.16թ
№ 06/3-8/32020-16

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 20.10.2016թ. թիվ 15/15.11/15820-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 12-ի N Մ-110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՍՀԿ, Ա. Բաբոսեղյան
հեռ. 060 544705

21.10.16թ
№ 044/30303-16

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 12-ի N Մ-110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դիտողության և առաջարկության վերաբերյալ** | |
| ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 12-ի N Մ-110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)» որոշման նախագծի հետ առաջարկում ենք որոշման նախագծի 1-ին կետում նշված ներմուծվող բեռի ընդհանուր արժեքը (7,155.92 ԱՄՆ դոլար) համապատասխանեցնել կից ներկայացված փաստաթղթերում ամրագրված բեռի փաստացի ընդհանուր արժեքին (14,865.62 ԱՄՆ դոլար): | Որոշման նախագիծը խմբագրվել է: |

14/6.16

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

----- նոյեմբերի 2016 թվականի N Մ-      - Ա

քաղ. Երևան

14/6.17

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 11-ի N 01.1/80-2/24907-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 2-ի N ԱԲ/22.2/11944-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 1-ի N 06/3-8/33217-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (համակցված հավաքածու (վիտրեոռետինալ և ֆակո միջամտությունների համար)՝ 1 տեղ, 6.8 կգ, 2,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրա-գրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնա-բուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

14/6.17

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

04.11.16 №01.1/80-2/24907-

Ձեր №

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 31.10.2016թ. N 15/15.4/16714-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

N034/32224-
04.11.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

14/6.17

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

02.11.16թ N ԾԿ/22.2/11944-16

Ձեր N ________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ.
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2016 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 15/15.4/16714-16 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԱՅԻԿ ԲԱՂՐՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախյան
դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

N 020/31894-16
02.11.16թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.17

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

N 06/3-8/33217-16
01.11.16թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 31.10.2016թ. թիվ 15/15.4/16714-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՀԿ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

N 044/31627-
01.11.16թ

14/6.18

# ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**--- նոյեմբերի 2016 թվականի N Մ- - Ա** 14/6.18

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 25-ի N 01.1/80-2/24289-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N ՎՀ/22.2/11630-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 25-ի N 06/3-8/32421-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք և բժշկական պարագաներ՝ 237 արկղ, 1870 կգ քաշով, 166,434.29 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5,059.52 եվրո, ցանկը կցվում է, «Զվարթնոց ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-023-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

14/6.18

[illegible]

[illegible]

| Նo | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ տոպրակ | 3500 | 2383.5 |
| 2 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ տոպրակ | 2700 | 1838.7 |
| 3 | Իմիպենեմ 500մգ / Սիլաստատին 500մգ, շիշ, փոշի, ներարկման համար | 4200 | 20979.00 |
| 4 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ տոպրակ | 3500 | 2383.50 |
| 5 | Իմիպենեմ 500մգ / Սիլաստատին 500մգ, շիշ, փոշի, ներարկման համար | 10300 | 51448.50 |
| 6 | Դելամանիդ, 50 մգ, դիտ., բլիստեր | 17472 | 45951.10 |
| 7 | Լինեզոլիդ, 600մգ, կաղապարով դիտ. | 7520 | 40796.00 |
| 8 | Իշիհարա թեստ, գունային տեսողություն, 38 պնակ | 1 | 233.75 |
| 9 | Ասեղ, միանգամյա օգտագործման, Լուեր 19G (1.1 x 40 մմ) կրեմագույն, ՆՏ | 11300 | 186.45 |
| 10 | Ներարկիչ, մեկանգամյա օգտագործման, Լուեր, 10մլ | 3100 | 105.09 |
| 11 | Ասեղ, միանգամյա օգտագործման, Լուեր 21G (0.8 x 40 մմ) կանաչ, ՆՄ | 9900 | 128.70 |
| 12 | | | |
| 13 | **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | | **166434.29** |

ԱՍՈՑԻԱՑԻԱ «ՄԵԴԵՍԵՆ ՍԱՆՍ ՖՐՈՆՏԻԵՐ» N4 ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 01538594 M.S.F. FILIALE D'ARMENIE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

14/6.13

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

25.10.16թ. № 01.1/80-2/24289-

Ձեր № ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 21.10.2016թ. N 15/15.4/15998-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

N034/30631-16
25.10.16թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

14/6.13

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

26.10.16թ. ԴՆ/22.2/11630-16
Ձեր N ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2016 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 15/15.4/15998-16 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
/ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՐԱՅԻԿ ԲԱՂՐՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախյան
դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

N020/30841-
26.10.16թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/6.18

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

N 06/3-8/32421-16
25.10.16թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 21.10.2016թ. թիվ 15/15.4/15998-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎՀԿ, Ն. Բեժանյան
հեռ. 060 544705

N 044/30768-16
25.10.16թ

**Ն Ա Խ Ա Գ Ի Ծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**— նոյեմբերի 2016 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

14/6.19

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի 4-ի N 01.1/80-2/24919-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N ԱԲ/22.2/12009-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 4-ի N 06/3-8/33786-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք և բժշկական պարագաներ՝ 166 արկղ, 950 կգ քաշով, 6,054.65 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2,567 եվրո, ցանկը կցվում է, «Զվարթնոց ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-023-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

[illegible]

| Նօ | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ տոպրակ | 1850 | 1259.85 |
| 2 | Ամիկացինի սուլֆատ 500մգ փոշի, սրվակ | 340 | 547.74 |
| 3 | Ներարկման ջուր, 10 մլ, պլաստիկ ամպուլ | 480 | 36.1 |
| 4 | Ձեռնոցներ, զննման, լատեքսյա, մեկ անգամյա օգտ., փոշով չպատված, միջին չափս | 9400 | 243.46 |
| 5 | Կաթիլաներարկման "Y" կոմպլեկտ, լուէր փականով, օդաթափանցիկ, ստերիլ, միանգամյա օգտագործման | 4800 | 1584 |
| 6 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ տոպրակ | 3500 | 2383.5 |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ | | 6054.65 |

14/6.19

ԱՍՈՑԻԱՑԻԱ «MEDECINS SANS FRONTIERES» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ N4 01538594 ASSOCIATION M.S.F. FILIALE D'ARMENIE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

14/6.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

04.11.16թ № 01.1/80-2/2491

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 01.11.2016թ. N 15/15.4/16886-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

N 034/32219-16
04.11.16թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

14/6.19

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

03.11.16 N ՉԲ/22.2/12009-16
Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2016 թվականի նոյեմբերի 02-ի թիվ 15/15.4/16886-16 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԱՅԻԿ ԲԱՂՐՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախյան
դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

N 020/32058-16

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.19

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

N 06/3-8/33786-16
04.11.16թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 01.11.2016թ. թիվ 15/15.4/16886-16 գրությանը կից ներկայացված՝ Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎՍՀԿ, Ն. Բեժանյան
հեռ. 060 544705

N 044/32233-16

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**հոկտեմբերի 2016 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

14/7.1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1240-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/ -16, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N 1/02.3/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի -ի N 06/3-8/ -16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ  է**.*

1. Սահմանել, որ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Շեն». բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օգնություն դպրոցներին, մանկապարտեզներին և համայնքային կենտրոններին» ծրագրի մասին» N Մ-1240-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱԼԻՔ-ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809912) 2016 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված N 20/10/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի օրգանական գյուղատնտեսության ուսումնական կենտրոնի էլեկտրական համակարգի կառուցման համար տրանսֆորմատորի ձեռքբերում՝ 650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

14/7.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

28.10.16թ № 01.1/80-2/24510-16

Ձեր №

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր .25.10.2016թ. N 15/15.1/16164-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1240-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/31242-16
28.10.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/7.1

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/32578-16
26.10.16թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 25.10.2016թ. թիվ 15/15.1/16164-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համպկարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1240-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՍՀԿ, Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

044/30947-16
26.10.16թ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**նոյեմբերի 2016 թվականի N Մ - -Ա**

**քաղ. Երևան**

14/7.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-075-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

**(«Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/ -16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի -ի N 06/3-8/ -16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Աջակցություն մանկական հաստատություններում և ցերեկային կենտրոններում գտնվող ծնողազուրկ ու ֆիզիկական, մտավոր արատներ ունեցող երեխաներին» ծրագրի մասին» N Մ-075-Ա որոշմամբ (2016 թվականի սեպտեմբերի 9-ի N Մ-853-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քամ են Գո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00858165) 2016 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված N Ա-002/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենցաղային տեխնիկայի մատակարարում՝ 4,127,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

14/7.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

01.11.16թ № 01.1/80-2/24720-16

Ձեր №

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.10.2016թ. N 15/15.1/16406-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-075-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամ)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նունա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/31778-16
01.11.16թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/7.2

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-3/33178-16
31.10.1

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 27.10.2016թ. թիվ 15/15.1/16406-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-075-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՀՀ, Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

044/31559-16
31.10.16թ

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

____ նոյեմբերի 2016 թվականի N Մ - -Ա

քաղ. Երևան

14/7.3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա և հուլիսի 22-ի N Մ-671-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էֆֆեկտ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03317278) 2016 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի ձեռքբերում՝ 2,332,416 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

14/7.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

04.11.2016թ. N 01.1/80-2/24863-

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 02.11.2016թ. N 15/15.6/16934-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/32334-16
04.11.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/7.3

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

№ 06/3-8/33909-16
07.11.2016թ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 02.11.2016թ. թիվ 15/15.6/16934-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎԱՀՎ. Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

044/32408-16
07.11.2016թ.

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**___ նոյեմբերի 2016 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

14/7.4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍԱՆ ԷՅԷՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02628501) 2016 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 218,150 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

14/7.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

31.10.16թ. №01.1/80-2/24611-16

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.10.2016թ. N 15/15.6/16334-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

31.10.16թ.
№ 034/31240-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

28.10.16թ. 14/7.4
№ 06/3-8/32920-16

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 26.10.2016թ. թիվ 15/15.6/16334-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎՀԿ, Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

28.10.16թ.
№ 044/31290-16

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ նոյեմբերի 2016 թվականի N Մ - -Ա 14/7.5
քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 16-ի N Մ-1359-Ա և 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-433-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հոմբեյս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00111086) 2016 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է զգեստապահարանի և անկողնային պարագաների ձեռքբերում՝ 113,850 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Ա Ռ Ա Ջ Ի Ն   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ
14/7.5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

31.10.16թ. № 01.1/80-2/24602

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.10.2016թ. N 15/15.6/16359-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի N Մ-215-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

31.10.16թ.
№ 034/31416-16

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/7.5

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

28.10.16թ.
№ 06/3-8/32919-16

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 26.10.2016թ. թիվ 15/15.6/16359-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի N Մ-215-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎՀԿ, Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

28.10.16թ.
№ 044/31303-16

---

<u>*ՆԱԽԱԳԻԾ*</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**___ հոկտեմբերի 2016 թվականի N Մ- -Ա** 14/7.6
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-956-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/-/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 30-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքում 11 սոցիալական բնակարանի կառուցում» N Մ-956-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ինտեր մաստեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011141) 2016 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N Գ-01/09 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 75,996,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

14/7.6

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

24. 10. 16թ. № 01.1/80-2/24243-16

Ձեր № ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 19.10.2016թ. N 15/15.6/15782-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-956-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-435

24. 10. 16 թ.
№ 034/30539-16

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/7.6

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

20. 10. 16թ
№ 06/3-8/31805-16

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 19.10.2016թ. թիվ 15/15.6/15782-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-956-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված՝ «Ինտեր մաստեր» ՍՊԸ-ի հետ 01.09.2016թ. կնքված NԳ-01/09 պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ շինարարական աշխատանքների կատարման ժամկետ է սահմանված մինչև 31.12.2017թ., այն դեպքում երբ ծրագրի 8-րդ կետի համաձայն՝ ծրագրի իրականացման ժամկետը նախատեսված է մինչև 2017թ. օգոստոսի 1-ը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկում եմ ներկայացված գործարքը համապատասխանեցնել ծրագրին:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՍՀԿ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

20. 10. 16 թ.
№ 044/30018-16

## ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-956-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողության և առաջարկության վերաբերյալ** | |
| Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-956-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.<br>Կից ներկայացված՝ «Ինտեր մաստեր» ՍՊԸ-ի հետ 01.09.2016թ. կնքված N9-01/09 պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ շինարարական աշխատանքների կատարման ժամկետ է սահմանված մինչև 31.12.2017թ., այն դեպքում երբ ծրագրի 8-րդ կետի համաձայն՝ ծրագրի իրականացման ժամկետը նախատեսված է մինչև 2017թ. օգոստոսի 1-ը:<br>Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկում եմ ներկայացված գործարքը համապատասխանեցնել ծրագրին: | Կազմակերպությունը 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N Կ-28/10 ներկայացրել է պայմանագրի խմբագրված տարբերակը: |

ARDA
ARMENIAN RELIEF AND DEVELOPMENT ASSOCIATION

# «ԱՌԴԱ»
## բարեգործական հիմնադրամ

Երևան, Պարույր Սևակ 9, հեռ. /010/20-94-22; 20-94-23

Կ-28/10

28 հոկտեմբերի 2016 թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պրն ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան.

Հաշվի առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 20.10.16 թ. N 06/3-8/31805-16 գրությամբ արված առաջարկությունը, Ձեզ եմ ներկայացնում պայմանագրի փոփոխված տարբերակը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքներով՝ ՀրահատՍտեփանյան
Գործադիր տնօրեն

# ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Գ - 01/09 14/76

ք. Երևան «01» սեպտեմբերի 2016թ

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Յրահատ Ստեփանյանի, գործելով կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Ինտեր մաստեր» ՍՊԸ-ն այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս տնօրեն Թադևոս Ենգոյանի, գործելով կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել Գյումրու Խորենացի 46/1 հասցեում կիսակառույց շենքը 11 բնակարանի վերակառուցելու շինարարական աշխատանքները՝ համաձայն նախահաշվի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

## 2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1. Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով: Պատվիրատուի կողմից տրամադրված նյութերի օգտագործման դեպքում պայմանագրի արժեքը նվազեցվում է տրամադրված նյութերի արժեքի չափով:

2.2. Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի որակի համար:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2. մինչև աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները.

3.1.3. աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 722 հոդվածում սահմանված երաշխիքային ժամկետում.

3.1.4. աշխատանքի արդյունքն ընդունելու կամ այն օգտագործելու ժամանակ ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 723 հոդվածով սահմանված ժամկետում, իր ընտրությամբ, Կապալառուից պահանջել՝

ա) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել թերությունները.

բ) համաչափորեն նվազեցնել աշխատանքի համար սահմանված գինը.

գ) հատուցել թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը.

3.1.5. աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո 1 (մեկ) տարվա ընթացքում Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1. աշխատանքները կատարելիս աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում,

3.2.2. Կապալառուին հանձնել հաստատված նախագծային-նախահաշվային փաստաթղթերը.

3.2.3. ապահովել շինարարության ֆինանսավորումը և անընդհատությունը.

3.2.4. սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով՝ Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը, իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1. կատարված աշխատանքի արդյունքն ստանալու համար Պատվիրատուի չներկայանալու կամ այն ընդունելուց խուսափելու դեպքերում Պատվիրատուին գրավոր զգուշացնել և զգուշացման օրվանից երկու ամիս անց վաճառել աշխատանքի արդյունքը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1. մինչև սույն պայմանագիրը կնքելը Պատվիրատուին անհրաժեշտ և հավաստի տեղեկատվություն տրամադրել առաջարկվող աշխատանքի, դրա առանձնահատկությունների, գնի և վճարման ձևի մասին, ինչպես նաև Պատվիրատուի ցանկությամբ նրան հաղորդել աշխատանքին վերաբերող այլ տեղեկություններ.

3.4.2.ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմատիվներին և կանոններին համապատասխան.

3.4.3. իրականացնել իր կողմից մոնտաժված սարքավորման անհատական փորձարկումը.

3.4.4. աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

## 4. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

4.1. Պատվիրատուի կողմից ավարտված աշխատանքի կամ առանձին աշխատանքների, փուլերի և ծավալների չափագրումը և վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամսվա 30-ին:

4.2. Պատվիրատուն աշխատանքի ծավալների հանձնման-ընդունման ակտը և հաշվետու փաստաթղթերն ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ուղարկել հանձնման-ընդունման՝ ստորագրված ակտը կամ դրա պատճառաբանված մերժումը:

4.3.Կապալառուի կողմից ավարտված աշխատանքները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից:

4.4. Աշխատանքի արդյունքները նախագծա-նախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքները:

4.5. Եթե աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է ի տարբերություն սկզբնական նախագծա-նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոխարինել աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

## 4. Աշխատանքի գինը և վարձատրությունը

4.1. Աշխատանքի գինը կազմում է 75,996,000 (յոթանասունհինգ միլիոն ինն հարյուր իննսունվեց հազար) դրամ՝ առանց ԱԱՅ-ի, որից 10,000,000 դրամը վճարվում է որպես կանխավճար:

4.2. Աշխատանքի գինը կայուն է, և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

4.3. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի 4.1 կետում սահմանված գինը Կապալառուին վճարել աշխատանքի արդյունքներն ընդունելուց հետո, եթե աշխատանքը կատարված է պատշաճ որակով, սույն պայմանագրով սահմանված ժամկետում կամ ժամկետից շուտ՝ Պատվիրատուի համաձայնությամբ:

4.4. Սույն պայմանագրի կատարման կապակցությամբ Կապալառուին հասանելիք՝ 4.1 կետում սահմանված գինը վճարելու պարտականությունը Պատվիրատուի կողմից չկատարելու դեպքում Կապալառուն իրավունք ունի պահել աշխատանքի արդյունքը մինչև Պատվիրատուն համապատասխան գումարը վճարի:

## 5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6. Վեճերի լուծման կարգը

Պատվիրատուի և Կապալառուի միջև աշխատանքի թերությունների կամ դրանց պատճառների հետ կապված վեճ առաջանալու դեպքում ցանկացած կողմի պահանջով նշանակվում է փորձաքննություն: Փորձաքննության ծախսերը կրում է փորձաքննություն պահանջած կողմը, իսկ եթե փորձաքննությունը նշանակվել է երկու կողմերի համաձայնությամբ, ապա ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

Յամաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

## 7. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև 2017 թվականի օգոստոսի 1-ը:

## 8. Այլ պայմաններ

8.1. Սույն պայմանագիրը կատարելիս կողմերը ղեկավարվում են կապիտալ շինարարության կապալի պայմանագրի մասին կանոններով, գործող օրենսդրությամբ, կապիտալ շինարարության նորմատիվ ակտերով և սույնպայմանագրի հատուկ պայմաններով:

8.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պատվիրատու | Կապալառու |
|---|---|
| «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ | «Ինտեր մաստեր» ՍՊԸ |
| ք. Երևան, Պ. Սևակի 9 | Երևան, Ն. Զարյան 132 |
| ՅՎՅՅ՝ 00057312 | ՅՎՅՅ՝ 01011141 |
| HSBC Հայաստան բանկ, h/h 001-096775-001 | «ՊրոԿրեդիտ բանկ», h/h 25304000474-0010 |
| Հիմնադրամի տնօրեն Յ.ՍՏԵՓԱՆՅԱՆ | Տնօրեն Թ. ԵՆԳՈՅԱՆ |

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

հոկտեմբերի 2016 թվականի N Մ- -Ա 14/7.7
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-528-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 01.1/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայունտեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիէս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2016 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Պրեմիում» տեսակի բենզինի ծեռքբերում՝ 630,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

14/7.7

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

28.10.16թ. № 01.1/80-2/24508

Ձեր №

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 24.10.2016թ. N 15/15.9/16088-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/31244-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/7.7

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/32446-16
26.10.16թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 24.10.2016թ. թիվ 15/15.9/16088-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՍՀԿ, Ն. Բեժանյան
հեռ. 060 544705

044/30882-16
26.10.16թ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**նոյեմբերի 2016 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

14/7.7

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 01.1/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի -ի N 06/3-4/1-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2016 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ռեգուլյար» տեսակի բենզինի ձեռքբերում՝ 408,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

17/7.8

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

04.11.16թ № 01.1/80-2/24965-16

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 02.11.2016թ. N 15/15.9/16928-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N Մ-792-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/32332-16

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

17/7.8

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/33907-16
07.11.16թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 02.11.2016թ. թիվ 15/15.9/16928-16 գրությանը կից ներկայացված՝ Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N Մ-792-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՀԿ, Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

044/32410-16
07.11.16

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հոկտեմբերի 2016 թվականի N Մ- -Ա 17/7.9
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1310-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Մայրի» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի -ի N 01.1/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի -ի N 06/3-8/-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Մայրի հասարակական կազմակերպության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում» ծրագրի մասին» N Մ-1310-Ա (2014 թվականի մարտի 14-ի Մ-197-Ա 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-999-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-122-Ա, մարտի 18-ի N Մ-263-Ա և դեկտեմբերի 4-ի N Մ-1267-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 02594556) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«ՏՈՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02526227) 2016 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազի կաթսայի ձեռքբերում՝ 308,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Սոցիալական ինտեգրման կենտրոն "Մայրի" հասարակական կազմակերպության
տնօրեն Զարուհի Մանուկյան
«17» հոկտեմբերի 2016թ

Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է հատուկ կարիքներով երեխաների և երիտասարդների ինտեգրումը հասարակության մեջ:<br>Ծրագիրը ուղղված է՝<br>1.Բացահայտելու հատուկ կարիքներով երեխաների անհատական օժտվածությունները եւ հնարավորությունները:<br>2.Ապահովելու երեխաներին օրական ութ ժամ կենսատարածքով,<br>3.Ապահովելու երեխաներին հասակակիցների հետ շփման հնարավորություն մշակութային համատեղ նախագծերին մասնակցելու միջոցով:<br>4.Ժամանակի ընթացքում փոխելու հասարակության մեջ արմատավորված կարծիքը հատուկ կարիքներով երեխաների վերաբերյալ եւ հրավիրել ուշադրություն նրանց կարիքներին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից (այսուհետ՝ հարկային արտոնություններ) |
| 3. | Բարեգործը | 1.Գերմանիայի Դաշնային Հանրապետությանն առընթեր BMZ հիմնադրամ Հասցե՝ Վայնմայստեր շտրասսե 16, D-10178 Բեռլին<br>2.Անտրոպոսոֆական բժշկության զարգացման հիմնադրամ, Շվեյցարիա, Դորնախ:<br>3. Բուժական մանկավարժության խթանման հիմնադրամ ( SBH , Հոլանդիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Սահմանափակ հնարավորություններով երեխաների և պատանիների սոցիալական ինտեգրման կենտրոն «Մայրի» ՀԿ |

17/7

| | | |
|---|---|---|
| | | ՀՎՀՀ 02594556, Եղբայրության 1, Շենգավիթ վար[illegible] |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Սկզբնական շրջանում՝ ք. Երևան, հետագայում՝ [illegible] մարզեր: Բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 35 141 000 (Երեսունհինգ միլիոն հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ցանկացած ախտորոշմամբ վեց տարեկանից բարձր տարիք ունեցող հատուկ կարիքներով անձինք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10 տարի (2014թ. հունվարի 1-ից – 2024թ-ի հունվարի մեկ ) |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Երևան, Շենգավիթի շրջան, Եղբայրության 11 հասցեում գտնվող շինությունում 6 արհեստանոցների ներքին հարդարում, կահավորում, սարքավորումներով ապահովում:<br>1. Ներքին հարդարման աշխատանքներ.պահանջվող գումարն է 1,500,000.00 դրամ (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ : Ներքին հարդարման աշխատանքները նախատեսվում է, որ կավարտվեն 2014-ի ընթացքում .<br>2. Կահավորում: Կահավորման համար անհրաժեշտ գումարն է 6,800,000.00 (վեց միլիոն ութ հարյուր հազար ) ՀՀ դրամ: Կահավորման աշխատանքները նախատեսվում է, որ կավարտվեն մինչև 2015 թվականի հոկտեմբեր ամսի վերջ:<br>3. Արհեստանոցները սարքավորումներով և նյութերով ապահովման համար անհրաժեշտ գումարն է 4,798,000.00 (չորս միլիոն յոթ հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ:<br>4. էլեկտրաէներգիայի ծախս 6,000,000.00 (վեց միլիոն) դրամ<br>5. «Արմենթել» ՓԲԸ հանրային էլեկտրոնային հաղորդակցության գծով ծախս և հեռախոսակապի ծառայությունների գծով ծախս 1,200,000 (Մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,<br>6. Գազաֆիկացում, սպասարկում 1,902,000.00 (մեկ միլիոն ինը հարյուր երկու հազար) ՀՀ դրամ<br>7. ՍՈՍ Միսթեմս ՍՊԸ անվտանգության համակարգի տեղակայում՝ 908,000 (Ինը հարյուր ութ հազար) ՀՀ դրամ:<br>8. Մինիբուսի ձեռք բերում Կրաստանից 1,948,000 (մեկ միլիոն ինը հարյուր |

14/7-9



| | | |
|---|---|---|
| | | քառասունութ հազար) ՀՀ դրամ<br>9. Ադմինիստրացիայի սենյակի համար կահույք և տեխնիկական սարքավորում 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ*<br>*(Այս ծախսը ներառված է նաև ծրագրի 11-րդ կետում:)<br>10.Գազի սպառման հետ կապված ծախս 7,745,000.00 (յոթ միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ,<br>11.Ջրի սպառման ծախս 840,000 (ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Ներքին հարդարման աշխատանքներ 1,500,000.00 ՀՀ դրամ (մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ)<br>2. Խոհանոցի համար կահույք 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>3. Ձեռագործ աշխատանքների արհեստանոցի կահույք 1,300,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>4. Նկարչական արհեստանոցի համար կահույք 1,300,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>5. Խեցեգործության արհեստանոցի համար կահույք, 1,200,000.00 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>6. Փայտամշակման արհեստանոցի կահույք, կահույքի հումք 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>7. Խոհանոցի համար էլեկտրական սարքավորումներ, սպասք, տնտեսական ապրանքներ 2,000,000.00 (երկու միլիոն) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>8. Ձեռագործ աշխատանքների արհեստանոցի էլեկտրական և այլ սարքեր |

14/7-9

| | | |
|---|---|---|
| | | և գործիքներ 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>9. Նկարչական և խեցեգործական արհեստանոցի համար գործիքներ, ներկեր, նյութեր, գլազուր, կավ և այլն 848,000.00 (ութ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>10. Փայտամշակման արհեստանոցի սարքավորումներ 450,000.00 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>11. էլեկտրաէներգիայի ծախս 6,000,000.00 (վեց միլիոն) ՀՀ դրամ<br>12. «Արմենթել» ՓԲԸ հանրային էլեկտրոնային հաղորդակցության գծով ծախս և հեռախոսակապի ծառայությունների գծով ծախս 1,200,000.00 (Մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ տարեկան 57,600.00 (Հիսունյոթ հազար վեց հարյուր) էլեկտրոնային հաղորդակցության գծով ծախս եւ տարեկան կտրվածքով 62,400.00 (Վաթսուներկու հազար չորս հարյուր)) ՀՀ դրամ հեռախոսակապի ծառայությունների գծով ծախս:<br>13. Գազաֆիկացում, սպասարկում 1,902,000.00 (մեկ միլիոն ինը հարյուր երկու հազար) ՀՀ դրամ, որից՝ գազի կաթսա և պատկանելիքներ առաջին հարկի համար – 844,000 (վեց հայյուր հազար), գազի կաթսա երկրորդ հարկի համար – 308,000 (երեք հարյուր ութ հազար) ՀՀ դրամ , գազաֆիկացում - 350,000 (երեք հայյուր հիսուն հազար) դրամ, գազի սպասարկման վճար տարեկան - 40,000 (քառասուն հազար) դրամ<br>14.Անվտանգության համակարգ՝ տարեկան սպասարկումով 908,000 (Ինը հարյուր ութ հազար) ՀՀ դրամ՝ որից տեղադրում՝ 368,000 (Երեք հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ և տարեկան սպասարկում 54,000 (հիսունչորս հազար) ՀՀ դրամ:<br>15. Մինիբուսի ձեռք բերում 1,948,000 (մեկ միլիոն ինը հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ<br>16. Ադմինիստրատցիայի սենյակի համար կահույք և տեխնիկական սարքավորում 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ* (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնու- |

14/7.9



| | | |
|---|---|---|
| | | թյուններից) *(Այս ծախսը ներառված է նաև ծրագրի 11-րդ կետում):<br>17. Գազի տարեկան սպառման ծախս մոտավորապես 770,000.00 (յոթ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ և գազի հաշվիչ 45,000 (հառասունհինգ հազար) ՀՀ դրամ:<br>18. Ջրի սպասարկման ծախս տարեկան մոտավորապես 84,000.00 (ութսունչորս հազար) ՀՀ դրամ: (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից) |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | 1. Ադմինիստրատցիայի սենյակի համար կահույք և տեխնիկական սարքավորում 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ* (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից) |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սոցիալական Ապահովման Նախարարություն, Առողջապահության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Մայրի» ՀԿ հոգաբարձուների խորհուրդ, BMZ Հիմնադրամ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

14/7.9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** 14/7.9

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

26.10.16թ № 01.1/80-2/24401-16

Ձեր №

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 24.10.2016թ. N 15/15.9/16089-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1310-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Մայրի» հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/30935-1

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/7.9

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/32356-16
25.10.16թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 24.10.2016թ. թիվ 15/15.9/16089-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1310-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Մայրի» հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ՀՎՍՀԿ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

044/30695-16
25.10.16թ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

նոյեմբերի 2016 թվականի N Մ- -Ա

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/ -16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի -ի N 06/3-8/ -16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա, 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա և 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-392-Ա որոշումների խմբագրությամբ) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «456,000 եվրոյին համարժեք դրամ և 505,240,000 դրամ» բառերը փոխարինել «456,000 եվրոյին համարժեք դրամ և 539,740,000 դրամ» բառերով:

2) որոշմանը կից ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 47/1, բն. 14, ՀՎՀՀ՝ 0256835) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02567702) 2016 թվականի հոկտեմբերի 3-ին կնքված N 1610003-1 պայմանագրում (2016 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանների փոփոխություն) նշված գործարքը, որով նախատեսվում է ՌԻԱՋ 315195-067 մակնիշի ավտոմեքենա ձեռք բերում (լիզինգային պայմաններով)՝ 4,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ

հիմնադիր տնօրենի հրամանով

«03» ...մբերի 2016

«ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՍՏԱՐԱՆ»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Կենսաբազմազանությամբ հարուստ և վտանգված տարածքներում, ինչպիսիք են արգելոցների, արգելավայրերի բուֆերային գոտիները, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների բուսատեսակների համար կարևոր միգրացիոն ուղիներ և կենսական միջավայր հանդիսացող տարածքներ պահպանումը, նշված տարածքների հարակից համայնքների դպրոցականների և երիտասարդների համա հիմնադրամի կողմից ստեղծված մարզային և տարածքային կենտրոններում բնապահպանական կրթությա անվճար դասընթացների պարբերաբար կազմակերպումը, համապատասխան դասընթացների միջոցո տեղաբնակչության կողմից բնական ռեսուրսների կայուն օգտագործմանը նպաստելն ու աջակցելը, էկո տուրիզմի զարգացմանն ուղղված գործնական անվճար դասընթացների կազմակերպումը, ինչի արդյունքու տեղի բնակիչները կունենան լրացուցիչ եկամտի աղբյուրներ. համապատասխան ենթակառուցվածքներ ստեղծումը, ներգնա էկո-տուրիզմի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը, գյուղակա համայնքների ջրամատակարարման բարելավումը, ինչպես նաև այլընտրանքային էներգիայ օգտագործմանը նպաստելն ու աջակցելը:<br>Ծրագիրն ուղղված է ՀՀ-ի անհետացման եզրին գտնվող կենդանատեսակների և բուսատեսակներ պահպանմանը, ինչպես նաև գյուղական համայնքների (հիմնականում սահմանամերձ) զարգացմանը աղքատության և արտագաղթի կրճատմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագիրը ֆինանսավորում են՝<br>Բրիտանական Համաշխարհային Հողային Միավորում/ British World Land Trust -180,000 եվրոյին համարժե դրամ չորս տարվա համար<br>Կովկասյան Բնության Հիմնադրամ/Caucasus Nature Fund -30,000 եվրոյին համարժեք դրամ չորս տարվա |

| | | |
|---|---|---|
| | | համար<br>Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ-ի Գերմանիայի մասնաճյուղը / E.V. Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets Germany -50,000 եվրոյին համարժեք դրամ չորս տարվա համար<br>Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի միջոցներից շուրջ 3,240, 000 ՀՀ դրամ՝ չորս տարվա կազմակերպչական ծախսերի համար<br>Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի միջոցներից շուրջ 7,200 եվրոյին համարժեք դրամ ՝ չորս տարվա էկոտուրիզմի զարգացման ծախսերի համար<br>Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի միջոցներից շուրջ 536,500, 000 ՀՀ դրամ՝ մեկ տարվա այլընտրանքային էներգիայի օգտագործման և գյուղական համայնքների ջրամատակարարման բարելավման ծախսերի համար<br>Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի միջոցներից շուրջ 20,000 եվրոյին համարժեք ՝ մեկ տարվա անտառազուրկ և դեգրադացված տարածքների վերականգնման նպատակով հիդրոգելի օգտագործմամբ ծառատունկի իրականացման ծախսերի համար<br>ENVIRON Հիմնադրամ-43,800 եվրոյին համարժեք դրամ՝ մեկ տարվա անտառազուրկ և դեգրադացված տարածքնում ծառատունկի իրականացման ծախսերի համար<br>IUCN NL/Բնության պահպանության միջազգային միավորման Նիդերլանդների մասնաճյուղ/ -125,000 եվրոյին համարժեք դրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող և իրականացնող է հանդիսանում Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (գործող հասցե՝ ք. Երևան, Խանջյան 47/1, բն. 14, ՀՎՀՀ՝ 02565835, հեռ. 010 55-52-09 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայր են հանդիսանում ՀՀ բոլոր մարզերը: Ծրագրի ուղղվածությունը բնապահպանական և կրթական է՝ ուղղված համայնքների զարգացմանը և աղքատության կրճատմանը: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի արժեքն է՝ չորս տարվա համար 456,000 եվրոյին համարժեք դրամ և 539, 740,000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրում ընդգրկված են՝<br>-սոցիալապես անապահով գյուղացիներ և համայնքի բնակիչներ, ովքեր ձեռք բերված գիտելիքների արդյունքում հնարավորություն կունենան ստանալ լրացուցիչ եկամուտ՝ վնաս չհասցնելով շրջակա |



14/7.16

| | | |
|---|---|---|
| | | միջավայրին,<br>-համայնքների 18-25 տարեկան գործազուրկ երիտասարդներ և պատանիներ, ովքեր չունեն այլ եկամուտ, ինչի արդյունքում արտագաղթում են հայրենի գյուղերից,<br>-երիտասարդ և տարեց կանայք ու աղջիկներ, ովքեր ձեռք բերված գիտելիքների արդյունքում կարող են տնային պայմաններում պատրաստված արտադրանքը իրացնել տեղական շուկաներում,<br>-սոցիալապես անապահով ընտանիքներ, ովքեր կարող են գիշերակաց և նախաճաշ տրամադրել զբոսաշրջիկներին,<br>-տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնց բյուջեն ծրագրի իրականացման ողջ ընթացքում կունենա լրացուցիչ մուտքեր,<br>-համայնքների 7-16 տարեկան դպրոցահասակ երեխաներ ու պատանիներ, որոնց շրջանում անհրաժեշտ ձևավորել սեր և հոգածություն իրենց հայրենի բնության նկատմամբ:<br>Ընդհանուր առմամբ ծրագրի շահառուներն են հանդիսանում համայնքների բնակիչները: Ծրագրի ընթացքում ձեռք բերված գույքն ու այլ ապրանքները ծրագրի ավարտին կհանձնվեն համայնքներին անհատույց օգտագործման իրավունքով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է և իրականացվում է 2010թ.-ից, այժմ որակավորման է ներկայացվում 2013թ. նոյեմբերի 30-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը իրականացվելիք ծրագիրը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Տարածքի պահպանման ծախսեր 4 տարվա համար<br>1.1 Վտանգված կենդանատեսակների և բուսատեսակների միգրացիոն ուղիների, կենդանիների բնադրավայրերի և տարածքի պահպանման ծախսեր (այդ թվում՝ նոտարական, կադաստրային և այլ ծախսեր՝ 2014-2017թթ. ընթացքում)–75,000 եվրոյին համարժեք դրամ,<br>1.2 Տարածքի հսկողության և պահպանման համար նախատեսված մեքենաների ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր-65,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2019թթ.),<br>1.3 Մեքենաների վերանորոգման և սպասարկման ծախսեր-8,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ. ընթացքում):<br>2. Գիտական աշխատանքների կազմակերպում 4 տարվա համար<br>2.1 Կենսաբազմազանության մշտադիտարկման, պահպանվող տարածքներին կից տեղաբնակների մրգատու/բանջարանային այգիների պահպանման պարագաների ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր-23,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ. ընթացքում), |



14/7.16

2.2 Անտառապահների համար նախատեսված արտահագուստ, սարք/սարքավորումների ձեռքբերման և/կա ներմուծման ծախսեր- 18,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ. ընթացքում):

3. Ծառատունկի կազմակերպման ծախսեր՝ տարեկան 2 անգամ, չորս տարվա կտրվածքով՝ 8 անգամ

3.1 Ծառերի/տնկիների և/կամ սերմերի ձեռքբերման/ներմուծման ծախսեր-17,000 եվրոյին համարժեք դրա չորս տարվա համար (2014-2017թթ. ընթացքում),

3.2 Հիդրոգելի ներմուծման ծախսեր-19,000 եվրոյին համարժեք դրամ երկու տարվա համար(2015-2016թթ ընթացքում),

3.3 Բահերի, ձեռնոցների, անհրաժեշտ պարագաների ձեռքբերման ծախսեր-5,700 եվրոյին համարժեք դրա (2014-2017թթ. ընթացքում),

3.4 Ոռոգման համակարգի խողովակների և այլ անհրաժեշտ պարագաների ներմուծման/ձեռքբերման տեղադրման ծախսեր-29,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ.),

3.5 Ծառերի հետագա խնամքի հետ կապված դեղորայքի, պարարտանյութերի ձեռքբերման և/կա ներմուծման ծախսեր- 8,700 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ. ընթացքում),

3.6 Ձիերի խնամքի և պահպանման հետ կապված սննդի, դեղորայքի և նախատեսված այլ պարագաներ ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր-14,700 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ. ընթացքում):

4. Բնապահպանական դասընթացների կազմակերպում համայնքներում
4 տարվա համար

4.1 Գրենական պիտույքների, ուսումնաօժանդակ նյութերի, համակարգչային և այլ տեխնիկայի, կահույք ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր-28,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ.),

4.2 Տպագրական ծառայությունների ծախսեր-9,000 եվրոյին համարժեք դրամ (2014- 2017թթ.),

4.3 Դասընթացներին մասնակցող աշակերտների համար սննդի ձեռքբերում-13,000 եվրոյին համարժեք դրա (2014-2017 թթ.),

4.4 Դասընթացավարների, մասնագետների գործուղումների, գիշերակացի, օրապահիկի ծախսեր-37,00 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ):

5. Էկոտուրիզմի զարգացում և շին. աշխատանքներ 4 տարվա համար

5.1 Էկո-զբոսաշրջության համար նախատեսված քայլուղիների, արահետների մշակման ծառայություններ ծախսեր-25,000 եվրոյին համարժեք դրամ (2014- 2017թթ.),

5.2 Անապահով գյուղաբնակների տների վերանորոգման ծախսեր–20,000 եվրոյին համարժեք դրամ (2014 2017թթ.),



14/7.1

5.3 Հեծանիվների և էլեկտրական հեծանիվների ձեռքբերման (ներմուծման) ծախսեր–7,200 եվրոյին համարժե դրամ (2014-2017թթ.),

5.4 Տնտեսական և այլ ապրանքների ձեռքբերման ծախսեր՝ տեղաբնակներին տրամադրելու համա (օտարերկրյա զբոսաշրջիկներին հյուրընկալելու նպատակով)-8,700 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ):

5.5 Փայտե տնակների կառուցման նպատակով շինանյութի ներմուծման/ձեռքբերման և շինաշխատանքներ կատարման ծախսեր 25000 եվրոյին համարժեք դրամ (2016-2017թթ)

6. Կազմակերպչական ծախսեր հիմնադրամի կողմից ստեղծված մարզային և համայնքային կենտրոններ համար 4 տարվա կտրվածքով

6.1 շուրջ 1,800,000 դրամ՝ բջջային հեռախոսակապի համար

6.2 շուրջ 540,000 դրամ՝ ինտերնետային ծառայությունների համար

6.3 շուրջ 180,000 դրամ՝ ջրամատակարարման և ջրահեռացման համար

6.4 շուրջ 720,000 դրամ՝ էլեկտրաէներգիայի ծախսեր:

7. Գյուղական տասներկու (Արազափ, Լուկաշին, Արծվաբերդ, Բերքաբեր, Լոր, Արևիս, Լոր Պարույր Սևակ, Ծովագյուղ, Զորագյուղ, Չկալով, Չինարի և Գնիշիկ) համայնքներ ջրամատակարարման բարելավման ծախսեր երկու տարվա համար (01.08.2014-01.08.2017թ.)

7.1 Խողովակների, կցամասերի և այլ նյութերի ձեռքբերման և մոնտաժման ծախսեր՝ 70,000,000 դրամ

7.2 Պոմպերի ձեռքբերման (ներմուծման) և տեղադրման ծախսեր՝ 10,000,000 դրամ

7.3 Ջրաչափական դիտահորեր և դիտահորերի կափարիչների ձեռքբերման և տեղադրման ծախսեր՝ 6,000,00 դրամ

7.4 Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծախսեր 12,000,000 դրամ

7.5 Ասֆալտապատման ծախսեր՝ 10,000,000 և դրամ

7.6 Հողային աշխատանքների գծով ծախսեր՝ 37,000,000 դրամ

7.7 ՕԿՋ-ների, ջրընդունիչների, քլորակայանների, ջրամատակարարման բաշխիչ ցանցի ու մաքրման և այլ հիդրավլիկ կառույցների վերանորոգման կամ կառուցման ծախսեր 28,000,000 դրամ

7.8 Այլ նյութեր, կցամասեր և աշխատանքներ՝ 16,000,000 դրամ

8. Բնության պահպանության և էկո-կրթության նպատակով այլընտրանքային էներգիայ օգտագործման ծախսեր մեկ տարվա համար (01.08.2014-01.08.2017 թ.)

8.1 Այլընտրանքային էներգետիկ համակարգի ձեռքբերման կամ ներմուծան (արևային վահանակներ ջրատաքացուցիչներ, ջեռուցման կաթսաներ, մարտկոցներ, քամու գեներատորներ, պոմպեր, էլ. հովի



14/7.

| | | |
|---|---|---|
| | | համակարգեր (էլ. ցանկապատ), արևային կաթիլային համակարգ, փողոցային լուսավորության ԼԵԴ լուսատուներ և այլն) ծախսեր՝ 212,000,000 դրամ, մասնավորապես Բերդավան, Ջուջևան, Արծվաբերդ, Ուջան Պարույր Սևակ, Վահան, Մովսես և Ծովագյուղ համայնքների մանկապարտեզներում և մարզադահլիճներում Գուգարք մանկապատանեկան ճամբարում, Ուրցաձոր համայնքի երեք անապահով ընտանիքների տներում և էկո-կրթական կենտրոնում տաք ջրի և ջեռուցման համակարգերի տեղադրման կամ վերակառուցման ինչպես նաև Ուրցաձոր, Լիճք, Վահան, Բարձրունի. Խնձորուտ, Գոմք, Գնիշիկ, Մարտիրոս, Ամրակից, Նոր Ազնաբերդ, Հորբատեղ և Նժդեհ համայնքների փողոցային լուսավորության համար<br>8.2 Համակարգերի փոխադրման, տեղադրման, տեխնիկական աջակցության, սպասարկման և այլ ծախսեր 101,000,000 դրամ (2014-2017թթ.),<br>**9. Գյուղական համայնքներում գյուղատնտեսության զարգացման, պահպանվող տարածքների ճանապարհների ստեղծման և սպասարկման նպատակով տրակտորների, էքսկավատորների և գյուղտեխնիկայի ձեռքբերման կամ ներմուծման ծախսեր (01.08.2016-01.08.2019 թ.)**<br>9.1 Թրթուրավոր տրակտորի և գյուղտեխնիկայի ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր՝ 28,000,000 դրամ,<br>9.2 Էքսկավատորի ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր՝ 6,500,000 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերում ծախսվում է՝<br>**Շուրջ 148,000 եվրոյին համարժեք դրամ՝** տարածքի պահպանման համար, այդ թվում՝ տարածքի հսկողության և պահպանման համար նախատեսված մեքենաների ձեռքբերման 13,000 եվրոյին համարժեք դրամ և ներմուծման 60, 000 եվրոյին համարժեք դրամ ծախսեր<br>**Շուրջ 41,000 եվրոյին համարժեք դրամ՝** գիտական աշխատանքների կազմակերպման, այդ թվում՝ կենսաբազմազանության մշտադիտարկման, պահպանվող տարածքներին կից տեղաբնակների մրգատու/բանջարանային այգիների պահպանման պարագաների ձեռքբերման ծախսեր-23,000 եվրոյին համարժեք դրամ և անտառապահների համար նախատեսված արտահագուստ, սարք/սարքավորումների ներմուծման ծախսեր- 18,000 եվրոյին համարժեք դրամ<br>**Շուրջ 94,100 եվրոյին համարժեք դրամ** ծառատունկի կազմակերպման համար, որից ծառերի/տնկիների ձեռքբերման ծախսեր-17,000 եվրոյին համարժեք դրամ, բահերի, ձեռնոցների, անհրաժեշտ պարագաների ձեռքբերման ծախսեր-5,700 եվրոյին համարժեք դրամ, ոռոգման համակարգի խողովակների և այլ անհրաժեշտ պարագաների ձեռքբերման ծախսեր-29,000 եվրոյին համարժեք դրամ, ծառատունկի իրականացման համար հիդրոգելի, ծառերի հետագա խնամքի հետ կապված դեղորայքի, պարարտանյութերի ձեռքբերման ծախսեր ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր-27,700 եվրոյին համարժեք դրամ, ձիերի |



14/7.10

| | | |
|---|---|---|
| | | խնամքի և պահպանման հետ կապված սննդի, դեղորայքի և նախատեսված այլ պարագաների ձեռքբերման ծախսեր-14,700 եվրոյին համարժեք դրամ:<br>**Շուրջ 87,000 եվրոյին համարժեք դրամ՝** բնապահպանական դասընթացների կազմակերպման համար, որից գրենական պիտույքների, ուսումնաօժանդակ նյութերի, համակարգչային և այլ տեխնիկայի, կահույքի ձեռքբերման 15,000 եվրոյին համարժեք դրամ և ներմուծման 13, 000 եվրոյին համարժեք դրամ ծախսեր, և դասընթացներին մասնակցող աշակերտների համար սննդի ձեռքբերում-13,000 եվրոյին համարժեք դրամ տպագրական ծախսեր-9,000 եվրոյին համարժեք դրամ, գործուղումների, գիշերակացի, օրապահիկի ծախսեր-37,000 եվրոյին համարժեք դրամ<br>**Շուրջ 85,900 եվրոյին համարժեք դրամ՝** էկո-զբոսաշրջության զարգացման շին. աշխատանքների՝ այդ թվում տնակների կառուցման, տների վերանորոգման, քայլուղիների, արահետների մշակման ծառայությունների ծախսեր-70,000 եվրոյին համարժեք դրամ, հեծանիվների, էլեկտրական հեծանիվների, տնտեսական և այլ ապրանքների ձեռքբերման ծախսեր-15,900 եվրոյին համարժեք դրամ,<br>**Շուրջ 347,500,000 ՀՀ դրամ՝** բնության պահպանության և էկո-կրթության նպատակով այլընտրանքային էներգիայի օգտագործման և զարգացման համար, այդ թվում՝ էներգաարդյունավետ և էներգախնայող լուծումների, նորագույն տեխնոլոգիական սարքավորումների և դրանց կառուցման կամ տեղադրման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման 200,000,000 դրամ և ներմուծման 147, 500,000 դրամ ծախսեր<br>**Շուրջ 189,000,000 ՀՀ դրամ՝** գյուղական համայնքների ջրամատակարարման բարելավման համար, այդ թվում՝ խողովակների, պոմպերի, դիտահորերի ձեռքբերման 99,000,000 դրամ և ներմուծման 20,000,000 դրամ ծախսեր, ինչպես նաև հողային ու ասֆալտապատման աշխատանքների և ՕՀՁ-ների, ջրընդունիչների ջրամատակարարման բաշխիչ ցանցի ու մաքրման կառույցների, ջրրակայանների վերանորոգման կամ կառուցման 70,000,000 դրամ ծախսերի համար<br>**Շուրջ 3,240,000 ՀՀ դրամ՝** հիմնադրամի կողմից ստեղծված մարզային և համայնքային կենտրոնների կազմակերպչական ծախսերի համար: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | **Կազմակերպական ծախսեր հիմնադրամի կողմից ստեղծված մարզային և համայնքային կենտրոնների համար 6 տարվա կտրվածքով՝**<br>Շուրջ 300,000 ՀՀ դրամ՝ բջջային հեռախոսակապի համար տարեկան կտրվածքով և 1,800,000 ՀՀ դրամ՝ վեց տարվա համար<br>Շուրջ 90,000 ՀՀ դրամ՝ ինտերնետային ծառայությունների համար տարեկան կտրվածքով և 540,000 ՀՀ դրամ՝ |

14/7.10

| | | |
|---|---|---|
| | | վեց տարվա համար<br>Շուրջ 30,000 ՀՀ դրամ՝ ջրամատակարարման և ջրահեռացման համար տարեկան կտրվածքով և 180,000 Հ դրամ՝ վեց տարվա համար<br>Շուրջ 120,000 ՀՀ դրամ՝ էլեկտրականության ծախսեր տարեկան կտրվածքով և 720,000 ՀՀ դրամ՝ վեց տարվա համար |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Բնապահպանության նախարարություն, Տեղական ինքնակառավարման մարմիններ, մարզպետարաններ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, այլ առևտրային կազմակերպություններ և իրավաբանական անձինք |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն կներկայացվի դոնորներին, ինչպես նաև սահմանված կարգով ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |



FPWC FOUNDATION ՀԻՄՆԱԴՐԱՄ 02565835 Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ

14/7.10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

14/7.10

02.11.16թ. № 01.1/80-2/24806-

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 28.10.2016թ. N 15/15.1/16591-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-1173-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ)» որոշման նախագծի հետ հայտնում ենք հետևյալը.

- անհրաժեշտ է ծրագրի 10-րդ կետում արտացոլել ծրագրի 9.1 և 9.2 ենթակետերում նախատեսված 34,500,000 դրամ ծախսատեսակները, քանի որ դրանք նույնպես հանդիսանում են ապրանքների ձեռք բերման գործարքներ,

- անհրաժեշտ ենք համարում նաև ծրագրի 10-րդ կետում հստակորեն տարանջատել առանձին միջոցառումների ներմուծվող և հանրապետությունում ձեռք բերվող ծախսատեսակները միմյանցից,

034/31899-16
02.11.16թ

- ծրագրի 11-րդ կետում նշվում է, որ կազմակերպական ծախսերի հաշվարկը նախատեսվում է չորս տարվա համար, սակայն փաստացի հաշվարկված է երեք տարվա կտրվածքով:

Հարգանքով՝ 14/7.10

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/7.10

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/33219-16
01.11.16թ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 28.10.2016թ. թիվ 15/15.1/16591-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-1173-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Ծրագրի 10-րդ կետում նշված՝ ձեռքբերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համար նախատեսված արժեքների հանրագումարը չի համապատասխանում (34.500.000 դրամով պակաս է նախատեսված) ծրագրի 6-րդ և 9-րդ կետերում նշված արժեքներին: Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկում եմ ճշտել առկա արժեքային անհամապատասխանությունը:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՍՀԿ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

044/31602-16
01.11.2016

# ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-1173-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի հետ, հայտնում ենք որ<br>- անհրաժեշտ է ծրագրի 10-րդ կետում արտացոլել ծրագրի 9.1 և 9.2 ենթակետերում նախատեսված 34,500,000 դրամ ծախսատեսակները, քանի որ դրանք նույնպես հանդիսանում են ապրանքների ձեռք բերման գործարքներ,<br>- անհրաժեշտ ենք համարում նաև ծրագրի 10-րդ կետում հստակորեն տարանջատել առանձին միջոցառումների ներմուծվող և հանրապետությունում ձեռք բերվող ծախսատեսակները միմյանցից,<br>- ծրագրի 11-րդ կետում նշվում է, որ կազմակերպական ծախսերի հաշվարկը նախատեսվում է չորս տարվա համար, սակայն փաստացի հաշվարկված է երեք տարվա կտրվածքով: | Դիտողությունը հաշվի է առնվել, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի 2016 թվականի նոյեմբերի 3-ի AE 16/132 գրությամբ: Լրամշակված ծրագիրը կցված է: |
| **ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.<br>Ծրագրի 10-րդ կետում նշված՝ ձեռքբերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համար նախատեսված արժեքների հանրագումարը չի համապատասխանում (34.500.000 դրամով պակաս է նախատեսված) ծրագրի 6-րդ և 9-րդ կետերում նշված արժեքներին: Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկում եմ ճշտել առկա արժեքային անհամապատասխանությունը: | Դիտողությունը հաշվի է առնվել, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի 2016 թվականի նոյեմբերի 3-ի AE 16/132 գրությամբ: Լրամշակված ծրագիրը կցված է:<br>14/7.10 |

FPWC

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ

14/7.10

03 նոյեմբերի 2016թ. AE 16/132

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՏՆՕՐԵՆ՝ ՌՈՒԲԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՑ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության 02.11.2016թ. N 01.1/80-2/24806-16 և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 01.11.2016թ. N 06/3-8/33219-16 գրությունների Ձեզ ենք ներկայացնում Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի ծրագրի լրամշակված տարբերակը:

Խնդրում ենք հիմք ընդունել վերոհիշյալ ծրագրի ներկայացված լրամշակված տարբերակը:

Կից ներկայացնում ենք վերահիշյալ ծրագիրը և ուղարկված գրությունների պատճենները:

Կանխավ շնորհակալություն:

Առդիր՝ 10 (տաս) թերթ:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝ ՌՈՒԲԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կատ.՝ Մարտին Մարալյան
Հեռ. 098311-052

094-32325
04 11 16

**_ՆԱԽԱԳԻԾ_**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**նոյեմբերի 2016 թվականի N Մ- - Ա**
**քաղ. Երևան**

14/8.1

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-1065-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը,-հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 01.1/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի -ի N 06/3-3/-16 եզրակացու-թյունները և հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2016 թվականի հոկտեմբերի 24-ի N 611 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մոմավառության սրահի հիմքերի ամրանավորման և բետոնային աշխատանքներ» ծրագրի մասին» N Մ-1065-Ա որոշմամբ որոշման մեջ և որոշմամբ-հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին, 2-րդ և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «263,562,100 դրամ» բառերը փոխարինել «577,050,780 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի հոկտեմբերի 10-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

14/8.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

02.11.16թ. № 01.1/80-2/25030

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 02.11.2016թ. N 15/15.9/16927-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Հայաստանի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N Մ-1065-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)» որոշման նախագծի հետ առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծի 1.1) կետում նշված «ծրագրի 6-րդ և 9-րդ կետերում» բառերը փոխարինել «ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում» բառերով:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/32520-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

14/Ձ.1

06/3-Ձ/33906-16
07.11.16թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան.*

Ձեր 02.11.2016թ. թիվ 15/15.9/16927-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N Մ-1065-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՀԿ, Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

044/32411-16
07.11.16թ

# ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N Մ-1065-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին) որոշման նախագիծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի հետ առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծի 1.1) կետում նշված «ծրագրի 6-րդ և 9-րդ կետերում» բառերը փոխարինել «ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում» բառերով: | Առաջարկությունը ընդունվել է նախագիծը խմբագրվել է: |
| | |

14/Ձ.1

***ՆԱԽԱԳԻԾ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

նոյեմբերի 2016 թվականի N Մ - - Ա 14/3.2
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1386-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(«Սեյվ դը չիլդրեն Ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբերի -ի N 01.1/80-2/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի -ի N 06/3-3/-16 եզրակացու-թյունները և հաշվի առնելով «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչություն 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N Ref 262/16 գրությունը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1296-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին N 1 («Սեյվ դը չիլդրեն Ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչություն)» N Մ-1386-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «60,000 դրամի չափով» բառերը փոխարինել «150,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Ա Ռ Ա Ջ Ի Ն   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ** 14/3.

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

07.11.16թ. № 01.1/80-2/25046

Ձեր № ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 03.11.2016թ. N 15/15.1/17038-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1386-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Սեյվ դը չիլդրեն Ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչություն)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/32516-1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/Յ.2

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-Յ/33908-16
07.11.16թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 03.11.2016թ. թիվ 15/15.1/17038-16 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1386-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Սեյվ դը չիլդրեն Ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎԱՀԿ. Ն.Բեժանյան
հեռ. 060 544705

044/32409-16
07.11.16թ